**1081 «Գնահատված հատուցումների գծով գումարներ»** հաշվում հաշվառվում են վերաապահովագրության պայմանագրերի կատարման գծով դրամական հոսքերը ՖՀՄՍ 17-ով սահմանված ձևով հաշվարկված: Հաշիվը օգտագործվում է ՖՀՄՍ 17-ով նկարագրված ընդհանուր չափման մեթոդով հաշվառումը (հիմնական մոտեցում) կիրառելիս: Հաշիվները դեբետագրվում են դրամական հոսքերի գնահատված գումարի չափով՝ թղթակցելով դրամական միջոցների հետ դրանց վճարման դեպքում կամ 303 ենթաբաժնի համապատասխան հաշիվների հետ: Հաշիվը կրեդիտագրվում է ներկայացված, սակայն չկարգավորված պահուստի չափով՝ թղթակցելով 1086 «Վերաապահովագրողի մասնաբաժինը ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստում» հաշվի հետ, վերադարձվող ապահովագրավճարների չափով՝ թղթակցելով 1084 «Դադարեցված պայմանագրերի գծով վերաապահովագրողներից ստացվելիք գումարներ» հաշվի հետ:

**1082 «Ստացվելիք պարգևավճարներ վերաապահովագրողներից»**- հաշվում դեբետագրվում են վերաապահովագրողներից ստացվելիք պարգևավճարները՝ կրեդիտագրելով համապատասխան եկամտային հաշվին, եթե պայմանագրերի խմբի գծով առկա չէ պարտավորություն վերաապահովագրավճարների գծով:

**1083 «Կանխավճարներ վերաապահովագրողներին»** - հաշվում դեբետագրվում են վերաապահովագրողներին տրված կանխավճարները՝ կրեդիտագրելով դրամական միջոցների հաշիվները:

**1084 «Դադարեցված պայմանագրերի գծով վերաապահովագրողներից ստացվելիք գումարներ»** - հաշիվը դեբետագրվում է դադարեցված պայմանագրերի գծով վերաապահովագրողներից ստացվելիք գումարների չափով՝ կրեդիտագրելով համապատասխանաբար 1080 «Վերաապահովագրողի մասնաբաժինը չվաստակած ապահովագրավճարների պահուստում հաշվարկված ապահովագրավճարների բաշխման մեթոդով», 1081 «Գնահատված հատուցումների գծով գումարներ», 1085 «Վերաապահովագրության պայմանագրային ծառայությունների մարժա» և 1089 «Պայմանագրի կատարման գծով ստացվելիք այլ գումարներ» հաշիվների հետ:

**1085 «Վերաապահովագրության պայմանագրային ծառայությունների մարժա»** հաշիվը օգտագործվում է ՖՀՄՍ 17-ով նկարագրված հիմնական մոտեցման կիրառման դեպքում: Նախատեսված է վերաապահովագրության պայմանագրերի գծով չճանաչված ծախսը արտացոլելու համար: Հաշիվը կրեդիտագրվում է ճանաչված ծախսի չափով՝ թղթակցելով համապատասխան ծախսային հաշվի հետ և վերադարձվող ապահովագրավճարների չափով՝ թղթակցելով 1084 «Դադարեցված պայմանագրերի գծով վերաապահովագրողներից ստացվելիք գումարներ» հաշվի հետ: Հաշիվը դեբետագրվում է պայմանագրերով նախատեսված վերաապահովագրավճարների և պայմանագրերի կատարման գծով դրամական հոսքերի տարբերության չափով:

**1088 «Հատուցումների գծով պահանջներ վերաապահովագրողների նկատմամբ»** - հաշիվը դեբետագրվում է վերաապահովագրողների նկատմամբ հատուցումների գծով պահանջի չափով՝ կրեդիտագրելով 1086 «Վերաապահովագրողի մասնաբաժինը ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստում» հաշվի հետ ճշգրտումները համապատասխան եկամտային կամ ծախսային հաշիվների հետ:

### **Ենթաբաժին 110**

#### **«Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի բաղադրիչներ»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրության պայմանագրերում պարունակվող ՖՀՄՍ 17-ի համաձայն առանձնացված ներդրումային բաղադրիչների հաշվառման համար: Ընդ որում, ներդրումային բաղադրիչի հաշվառումը տարվում է ՖՀՄՍ 9-ի համաձայն:

**1100 «Ապահովագրության պայմանագրերում պարունակվող ներդրումային բաղադրիչի գծով ստացվելիք գումարներ ֆիզիկական անձ և անհատ ձեռնարկատեր ապահովադիրներից»** - այս հաշվում արտացոլվում է ՖՀՄՍ 17-ի համաձայն ապահովագրական պայմանագրերից առանձնացված ներդրումային բաղադրիչը՝ հետևյալ ձևակերպումներով.

Դտ- 1100

Կտ- Դրամական միջոցներ:

Ներդրումային բաղադրիչի հետագա չափումը կատարվում է ամորտիզացված արժեքով՝

Դտ- 1100

Կտ- համապատասխան եկամտային հաշիվ,  
կամ

Դտ- համապատասխան ծախսային հաշիվ,

Կտ- 1100՝



Էֆեկտիվ տոկոսադրույքով հաշվարկված եկամտի չափով՝ համապատասխանաբար դրական կամ բացասական մեծության դեպքում:

**1101** հաշվի հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1100 հաշվի հաշվառումը:

### **Ենթաբաժին 111**

#### **«Ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրեր, ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքներ»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ուղղակի մասնակցության հատկանիշներով պայմանագրերի և պայմանագրերում ներառված ածանցյալ գործիքների հաշվառման համար՝ համաձայն ՖՀՄՍ 17-ի:

**1110 «Ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրեր»** - այս հաշիվը նախատեսված է այն ապահովագրության պայմանագրերի համար, որոնք պարունակում են ուղղակի մասնակցության հատկանիշներ՝ համաձայն ՖՀՄՍ 17-ի:

Ապահովագրության պայմանագրերի վերագնահատման դեպքում տրվում են հետևյալ ձևակերպումները.

Դտ- 1110

Կտ- համապատասխան եկամտային հաշիվ,  
կամ

Դտ- համապատասխան ծախսային հաշիվ

Կտ- 1110՝

համապատասխանաբար դրական կամ բացասական վերագնահատման դեպքում:

**1111 «Ապահովագրության պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքներ»** - այս հաշիվը նախատեսված է ապահովագրության պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքների առանձնացված հաշվառման համար՝ համաձայն ՖՀՄՍ 17-ի:

Ապահովագրության պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքի մեծության վերագնահատման դեպքում տրվում են հետևյալ ձևակերպումները.

Դտ- 1111

Կտ- համապատասխան եկամտային հաշիվ,  
կամ

Դտ- համապատասխան ծախսային հաշիվ

Կտ- 1111՝

համապատասխանաբար դրական կամ բացասական վերագնահատման դեպքում:

1112 հաշվի հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1110 հաշվի հաշվառումը:

1114 «Ապահովագրության պայմանագրերում պարունակվող առանձնացվելի ապրանքների և ոչ ապահովագրական ծառայությունների գծով ստացվելիք գումարներ» հաշիվը նախատեսված է ապահովագրական պայմանագրերում պարունակվող առանձնացվելի ապրանքների և ոչ ապահովագրական ծառայությունների գծով ստացվելիք գումարների արտացոլման համար՝ համաձայն ՖՀՄՍ 17-ի: Հաշիվների հաշվառումը տարվում է ՖՀՄՍ 15-ի 7-րդ պարագրաֆի համաձայն:

**(Ենթաբաժիններ 102-111-րդը խմբ. 27,12.22թ. թիվ 343-Ն)**

### **Ենթաբաժին 119**

#### **«Հնարավոր կորուստների պահուստներ»**

Այս ենթաբաժնի հաշիվները կարգավորող են: Դրանք նախատեսված են ուղղակի ապահովագրության և համաապահովագրության, վերաապահովագրության, ինչպես նաև բանկային և այլ հաշիվներում արտացոլված գումարների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության դեպքում) հաշվառման համար:

## **ԲԱԺԻՆ 12**

### **«Ընթացիկ ներդրումներ, տրամադրված փոխառություններ և կնքված ռեպո համաձայնագրեր»**

Այս բաժինը ներառում է 120 «Ընթացիկ ավանդներ բանկերում», 121 «Այլ ընթացիկ ներդրումներ», 122 «Բանկերին տրամադրված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր», 123 «Ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններին տրամադրված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր», 124 «Ներդրումային ընկերություններին տրամադրված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր», 125 «Վարկային կազմակերպություններին տրամադրված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր», 126 «Այլ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր», 127-128 «Այլ անձանց տրամադրված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր» և 129 «Ընթացիկ ներդրումների և փոխառությունների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) պահուստ»:

Բաժնում հաշվառվող ակտիվների հաշվապահական հաշվառումը կատարվում է ստորև ներկայացված սկզբունքների համաձայն, եթե այլ բան նախատեսված չէ ՖՀՄՍ 9 ստանդարտով:

### **Ենթաբաժին 120 «Ընթացիկ ավանդներ բանկերում»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերության կողմից բանկերում ներդրված ավանդների, բանկերի և այլ անձանց մոտ ներդրված այլ գումարների հաշվառման համար:

**1200 «Ընթացիկ ավանդներ բանկերում»**- այս հաշիվը նախատեսված է բանկերում ներդրված ընթացիկ ավանդների հաշվառման համար: Ավանդները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:  
Բանկերում ընթացիկ ավանդներ ներդնելիս.

Դտ-1200

Կտ-Դրամական միջոցներ:

Ավանդների գծով տոկոսները կուտակվում են հետևյալ ձևակերպումներով.

Դտ- 1200,

Կտ- համապատասխան եկամտային հաշիվ:

**1201 «Բանկերում ներդրված ընթացիկ ավանդների գծով անվանական տոկոսներ»** - այս հաշիվը նախատեսված է ընթացիկ ավանդների գծով անվանական տոկոսադրույքով հաշվարկված տոկոսների, տույժերի և տուգանքների արտացոլման համար:

Հաշվարկված անվանական տոկոսների չափով տրվում են հետևյալ ձևակերպումները.

Դտ- 1201

Կտ- 1200

### **Ենթաբաժին 121 «Այլ ընթացիկ ներդրումներ»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերությունների կողմից բանկերի և այլ անձանց մոտ ներդրված այլ գումարների և դրանց գծով անվանական տոկոսների հաշվառման համար:

Այլ ընթացիկ ներդրումները հաշվառվում են ամորտիզացված արժեքով: Հաշվապահական ձևակերպումները տրվում են նույն սկզբունքով, ինչ որ 120 ենթաբաժնի հաշիվների հաշվառման դեպքում է, իսկ տույժերի և տուգանքների չափով տրվում են հետևյալ ձևակերպումները.

Դտ-1211

Կտ- համապատասխան եկամտային հաշիվ:

### **Ենթաբաժին 122**

#### **«Բանկերին տրամադրված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերության կողմից բանկերին տրամադրված ընթացիկ փոխառությունների և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրերի հաշվառման համար:

Տրամադրված ընթացիկ փոխառությունները և կնքված ռեպո համաձայնագրերը հաշվառվում են ամորտիզացված արժեքով: Հաշվապահական ձևակերպումները տրվում են նույն սկզբունքով, ինչ որ 121 ենթաբաժնի հաշիվների հաշվառման դեպքում է:

### **Ենթաբաժին 123**

#### **«Ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններին տրամադրված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններին տրամադրված ընթացիկ փոխառությունների և կնքված ռեպո համաձայնագրերի հաշվառման համար:

Տրամադրված ընթացիկ փոխառությունները և կնքված ռեպո համաձայնագրերը հաշվառվում են ամորտիզացված արժեքով: Հաշվապահական ձևակերպումները տրվում են նույն սկզբունքով, ինչ որ 121 ենթաբաժնի հաշիվների հաշվառման դեպքում է:

### **Ենթաբաժին 124**

#### **«Ներդրումային ընկերություններին տրամադրված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերության կողմից ներդրումային ընկերություններին տրամադրված ընթացիկ փոխառությունների և կնքված ռեպո համաձայնագրերի հաշվառման համար:

Տրամադրված ընթացիկ փոխառությունները և կնքված ռեպո համաձայնագրերը հաշվառվում են ամորտիզացված արժեքով: Հաշվապահական ձևակերպումները տրվում են նույն սկզբունքով, ինչ որ 121 ենթաբաժնի հաշիվների հաշվառման դեպքում է:

### **Ենթաբաժին 125**

#### **«Վարկային կազմակերպություններին տրամադրված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերության կողմից վարկային կազմակերպություններին տրամադրված ընթացիկ փոխառությունների և կնքված ռեպո համաձայնագրերի հաշվառման համար:

Տրամադրված ընթացիկ փոխառությունները և կնքված ռեպո համաձայնագրերը հաշվառվում են ամորտիզացված արժեքով: Հաշվապահական ձևակերպումները տրվում են նույն սկզբունքով, ինչ որ 121 ենթաբաժնի հաշիվների հաշվառման դեպքում է:

### **Ենթաբաժին 126**

#### **«Այլ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերության կողմից այլ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված ընթացիկ փոխառությունների և կնքված ռեպո համաձայնագրերի հաշվառման համար:

Տրամադրված ընթացիկ փոխառությունները և կնքված ռեպո համաձայնագրերը հաշվառվում են ամորտիզացված արժեքով: Հաշվապահական ձևակերպումները տրվում են նույն սկզբունքով, ինչ որ 121 ենթաբաժնի հաշիվների հաշվառման դեպքում է:

### **Ենթաբաժին 127-128**

#### **«Այլ անձանց տրամադրված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերության կողմից այլ անձանց տրամադրված ընթացիկ փոխառությունների հաշվառման համար:

Տրամադրված ընթացիկ փոխառությունները և կնքված ռեպո համաձայնագրերը հաշվառվում են ամորտիզացված արժեքով: Հաշվապահական ձևակերպումները տրվում են նույն սկզբունքով, ինչ որ 121 ենթաբաժնի հաշիվների հաշվառման դեպքում է:

## **Ենթաբաժին 129**

### **«Ընթացիկ ներդրումների և փոխառությունների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) պահուստ»**

Այս ենթաբաժնի հաշիվները կարգավորող են: Դրանք նախատեսված են ընթացիկ ներդրումների և փոխառությունների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) պահուստի հաշվառման համար:

## **ԲԱԺԻՆ 13**

### **«Շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ»**

Այս բաժինը ներառում է 130 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր», 131 «ՀՀ պետական արժեթղթեր», 132 «ՀՀ ոչ պետական արժեթղթեր», 133 «Այլ երկրների պետական արժեթղթեր», 134 «Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր», 135 «Միջազգային ֆինանսական կազմակերպությունների արժեթղթեր», 136 «Աժանցյալ գործիքներ», 138 «Ռեպո համաձայնագրով վաճառված շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ», 139 «Շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ» ենթաբաժինները:

Այս բաժնի հաշիվների հաշվառումը տարվում է համաձայն ՖՀՄՍ 9-րդ ստանդարտի: Այս բաժնի հաշիվներում հաշվառվում են այն ֆինանսական ակտիվները, որոնք ապահովագրական ընկերությունը, համաձայն ՖՀՄՍ 9-ի, դասակարգել է որպես շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ: Բաժնում ներառված հաշիվները ակտիվային են՝ դեբետում ցույց է տրվում ընկերության ունեցած պահանջների ավելացումը, իսկ կրեդիտում՝ դրանց նվազումը:

Բաժնում հաշվառվող ակտիվների հաշվապահական հաշվառումը կատարվում է ստորև ներկայացված սկզբունքների համաձայն, եթե այլ բան նախատեսված չէ ՖՀՄՍ 9 ստանդարտով:

Բաժնում հաշվառվող ակտիվների ձեռքբերման ժամանակ տրվում են հետևյալ թղթակցումները.

ա) եթե ակտիվի ձեռքբերման արժեքը հավասար է իրական արժեքին.

Դտ- ակտիվի արտացոլման համապատասխան հաշիվ,

Կտ- դրամական միջոց,

բ) եթե ակտիվի ձեռքբերման արժեքը գերազանցում է իրական արժեքը.

Դտ- ակտիվի արտացոլման համապատասխան հաշիվ (իրական արժեքով),

Դտ- համապատասխան ծախսային հաշիվ (ձեռքբերման գնի և իրական արժեքի տարբերության չափով)

Կտ- դրամական միջոց,

գ) եթե ակտիվի ձեռքբերման արժեքը ավելի փոքր է, քան իրական արժեքը.

Դտ- ակտիվի արտացոլման համապատասխան հաշիվ (իրական արժեքով),

Կտ- դրամական միջոց,

Կտ- համապատասխան եկամտային հաշիվ (իրական արժեքի և ձեռքբերման գնի տարբերության չափով):

Բաժնում հաշվառվող ակտիվների գծով տոկոսային եկամուտների ճանաչման նպատակով ակտիվների ձեռքբերման ժամանակ հաշվարկվում է էֆեկտիվ տոկոսադրույք: Հաշվարկված դրույքով ճանաչվում է տոկոսային եկամուտ՝ հետևյալ ձևակերպմամբ.

Դտ- ակտիվի արտացոլման համապատասխան հաշիվ

Կտ- համապատասխան եկամտային հաշիվ:

Տոկոսային եկամտի ճանաչումից հետո կատարվում է ակտիվի իրական արժեքի վերագնահատում՝ հետևյալ հաշվապահական ձևակերպումներով.

ա) դրական վերագնահատման ժամանակ.

Դտ- ակտիվի արտացոլման համապատասխան հաշիվ,

Կտ- համապատասխան եկամտային հաշիվ.

բ) բացասական վերագնահատման ժամանակ.

Դտ- համապատասխան ծախսային հաշիվ,

Կտ- ակտիվի արտացոլման համապատասխան հաշիվ:

Բաժնում հաշվառվող ակտիվների դուրսգրման ժամանակ տրվում են հետևյալ հաշվապահական ձևակերպումները.

ա) եթե ակտիվի իրացման արժեքը հավասար է հաշվեկշռային արժեքին.

Դտ- դրամական միջոց,

Կտ- ակտիվի արտացոլման համապատասխան հաշիվ,

բ) եթե ակտիվի իրացման արժեքը գերազանցում է հաշվեկշռային արժեքը.

Դտ- դրամական միջոց,

Կտ- ակտիվի արտացոլման համապատասխան հաշիվ (հաշվեկշռային արժեքով),

Կտ- համապատասխան եկամտային հաշիվ (իրացման գնի և հաշվեկշռային արժեքի տարբերության չափով):

գ) եթե ակտիվի իրացման արժեքը ավելի փոքր է, քան հաշվեկշռային արժեքը.

Դտ- դրամական միջոց,

Դտ- համապատասխան ծախսային հաշիվ (հաշվեկշռային արժեքի և իրացման գնի տարբերության չափով)

Կտ- ակտիվի արտացոլման համապատասխան հաշիվ (հաշվեկշռային արժեքով):

## **Ենթաբաժին 136** **«Ածանցյալ գործիքներ»**

Այս ենթաբաժնում հաշվառվում են ապահովագրական ընկերության կողմից ձեռք բերված ածանցյալ գործիքները: Հաշվապահական հաշվառումը կատարվում է համաձայն ՖՀՄՍ 9-ի:

Ենթաբաժնի հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են կազմակերպության կողմից կնքված ածանցյալ գործիքների իրական արժեքի ավելացումը, իսկ կրեդիտում՝ նվազումը:

**1360 «Ֆյուչերս»**- հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից կնքված ածանցյալ գործիքների հաշվառման համար: Հաշվառումը տարվում է իրական արժեքով: Պայմանագրի կնքման ժամանակ գրանցումներ չեն իրականացվում:

Հաշիվը դեբետագրվում է՝

1) իրական արժեքը բարձրանալու դեպքում, տարբերության գումարի չափով՝

Դտ- 1360

Կտ- 619-620 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Հաշիվը կրեդիտագրվում է՝

2) իրական արժեքը նվազման դեպքում, տարբերության գումարի չափով, բայց ոչ ավել, քան հաշվի վրա դրական մնացորդն էր՝

Դտ - 729 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ -1360,

Եթե իրական արժեքի նվազման դեպքում, գումարը գերազանցում է հաշվի վրա դրական մնացորդ, ապա կորստի հաշվեգրումը շարունակվում է պասիվային 3401 հաշվի վրա՝

Դտ -729 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ -3401

**1362 «Օպցիոն»**- հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից կնքված օպցիոնի հաշվառման համար: Հաշվառումը տարվում է իրական արժեքով: Պայմանագրի կնքման պահին կատարվում է հետևյալ գրանցումը վճարված գումարի չափով՝

Դտ - 1362

Կտ - Դրամական միջոցներ

Այնուհետ հաշիվը ենթարկվում է վերագնահատման:

**1363 «Արժույթային սվոպ»** - հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից կնքված արժույթային սվոպի հաշվառման համար: Հաշվառումը տարվում է իրական արժեքով: Պայմանագրի կնքման ժամանակ գրանցումներ սույն հաշվում



չեն իրականացվում՝ արտացոլելով այն արտահաշվեկշռային հաշիվներում: Ապագայում ձեռքբերման ենթակա գումարները արտացոլելով 8073, իսկ վաճառքի ենթակա գումարները՝ 8077 հաշիվներում:

Հաշիվը դեբետագրվում է՝

1) կազմակերպության համար փոխարժեքի բարենպաստ փոփոխության դեպքում, ինչպես նաև տրամադրված արժույթի դիմաց գումարների հաշվեգրման գումարի չափով՝

Դտ- 1363

Կտ- 619-620 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Հաշիվը կրեդիտագրվում է՝

2) կազմակերպության համար փոխարժեքի անբարենպաստ փոփոխության դեպքում, բայց ոչ ավել, քան հաշվի վրա դրական մնացորդն էր, ինչպես նաև ստացված արժույթի դիմաց տոկոսների հաշվեգրման գումարի չափով՝

Դտ- 729 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ- 1363,

եթե իրական արժեքի նվազման դեպքում, գումարը գերազանցում է հաշվի վրա դրական մնացորդ, ապա կորստի հաշվեգրումը շարունակվում է պասիվային 3404 հաշվի վրա՝

Դտ- 729 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ- 3403

**1364 «Տոկոսադրույքային սվոպ»-** հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից կնքված տոկոսադրույքային սվոպի հաշվառման համար: Հաշվառումը տարվում է իրական արժեքով: Պայմանագրի կնքման ժամանակ գրանցումներ սույն հաշվում չեն իրականացվում, արտացոլելով այն արտահաշվեկշռային 8078 հաշվում՝ գործարքի հիմքում ընկած գումարի չափով:

Հաշիվը դեբետագրվում է հաշվեգրվող անվանական տոկոսների չափով՝

Դտ - 1364

Կտ - 619-620 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Հաշիվը կրեդիտագրվում է հաշվեգրվող վճարվելիք տոկոսների չափով՝ հաշվում առկա դրական մնացորդի չափով՝

Դտ- 729 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ- 1365,

եթե գումարը գերազանցում է հաշվում առկա դրական մնացորդը, ապա հաշվեգրումը շարունակվում է 3405 հաշվի վրա՝

Դտ- 729 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ- 3405

Ենթաբաժնի մնացած հաշիվների հաշվառումը իրականացվում է նույն եղանակով:

### **Ենթաբաժին 138**

**«Ռեպո համաձայնագրով վաճառված շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ»**

Այս ենթաբաժնում հաշվառվում են ապահովագրական ընկերության կողմից ռեպո համաձայնագրով վաճառված շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթերը՝ համաձայն ՖՀՄՍ 9-րդ ստանդարտի: Ենթաբաժնում ներառված հաշիվները ակտիվային են, դեբետագրվում են ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթերի իրական արժեքով, դրական վերագնահատման գումարով, կրեդիտագրվում են ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթերի հետ ստացման դեպքում իրական արժեքով, բացասական վերագնահատման գումարով:

**Ենթաբաժին 139**

**«Շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող այն ակտիվների համար, որոնց համար նախատեսված հաշիվներ չկան:

**ԲԱԺԻՆ 14**

**«Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ»**

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 140 «ՀՀ ԿԲ արժեթղթեր», 141 «ՀՀ պետական արժեթղթեր», 142 «ՀՀ ոչ պետական արժեթղթեր», 143 «Այլ երկրների պետական արժեթղթեր», 144 «Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր», 145 «Միջազգային ֆինանսական կազմակերպությունների արժեթղթեր», 146 «Ռեպո համաձայնագրով վաճառված իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ»:

Այս բաժնի հաշվառումը տարվում է համաձայն ՖՀՄՍ 9-ի: Այս բաժնի հաշիվներում հաշվառվում են այն արժեթղթերը, որոնք ապահովագրական ընկերությունը, համաձայն ՖՀՄՍ 9-ի, դասակարգել է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող: Հաշիվները ակտիվային են՝ դեբետում ցույց է տրվում ընկերության ունեցած պահանջների ավելացումը, իսկ կրեդիտում՝ դրանց նվազումը:

Բաժնում հաշվառվող ակտիվների հաշվապահական հաշվառումը կատարվում է ստորև ներկայացված սկզբունքների համաձայն, եթե այլ բան նախատեսված չէ ՖՀՄՍ 9 ստանդարտով:

Բաժնում հաշվառվող ակտիվները ձեռքբերման ժամանակ հաշվառվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները՝ դեբետագրելով ակտիվի համապատասխան հաշիվը և կրեդիտագրելով դրամական միջոցների հաշիվը: Սկզբնական ճանաչումից հետո ակտիվները վերագնահատվում են իրական արժեքով:

Բաժնում հաշվառվող ակտիվների գծով տոկոսային եկամուտների ճանաչման նպատակով ակտիվների ձեռքբերման ժամանակ հաշվարկվում է էֆեկտիվ տոկոսադրույք: Հաշվարկված դրույքով ճանաչվում է տոկոսային եկամուտ՝ հետևյալ ձևակերպմամբ.

Դտ- ակտիվի արտացոլման համապատասխան հաշիվ

Կտ- համապատասխան եկամտային հաշիվ:

Տոկոսային եկամտի ճանաչումից հետո կատարվում է ակտիվը չափվում է իրական արժեքով՝ իրական արժեքի վերագնահատումից օգուտները կամ վնասները արտացոլելով այլ համապարփակ եկամտի՝ իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերաչափումից առաջացող օգուտները և վնասները արտացոլող հաշվում:

Բաժնում հաշվառվող ակտիվների դուրսգրման ժամանակ կրեդիտագրվում է ակտիվի համապատասխան հաշիվը՝ դեբետագրելով դրամական միջոցները, իսկ այլ համապարփակ եկամտի արտացոլման համար նախատեսված հաշվի մնացորդը.

ա) դրական մնացորդի դեպքում՝ դեբետագրվում է՝ կրեդիտագրելով համապատասխան եկամտային հաշիվը,

բ) բացասական մնացորդի դեպքում՝ կրեդիտագրվում է՝ դեբետագրելով համապատասխան ծախսային հաշիվը: Այն դեպքում, երբ իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ընթացիկ արժեթղթերը վերադասակարգվում են որպես առևտրական նպատակներով պահվող ակտիվներ, ապա այլ համապարփակ եկամտի արտացոլման համար նախատեսված հաշվի մնացորդը գրանցվում է եկամուտների հաշվետվության մեջ՝ որպես իրացված շահույթ կամ վնաս:

Երբ իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող արժեթղթերը վաճառվում են ռեպո համաձայնագրով, կրեդիտագրվում է տվյալ արժեթղթի հաշիվը, դեբետագրվում է ռեպո համաձայնագրով վաճառված իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների ենթաբաժնի համապատասխան հաշիվը: Արժեթղթի հետագա չափումը կատարվում է նույն կերպ, ինչ նախկինում էր: Արժեթղթի հետ ստացման ժամանակ կրեդիտագրվում է ռեպո համաձայնագրով վաճառված իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող

Ֆինանսական ակտիվների հաշիվը, դեբետագրվում է տվյալ արժեթղթի նախկին հաշիվը:

## **ԲԱԺԻՆ 15**

### **«Ամորտիզացված արժեքով հաշվառվող ընթացիկ ներդրումներ»**

Այս բաժինը ներառում է 150 «ՀՀ ԿԲ արժեթղթեր», 151 «ՀՀ պետական արժեթղթեր», 152 «ՀՀ ոչ պետական արժեթղթեր», 153 «Այլ երկրների պետական արժեթղթեր», 154 «Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր», 155 «Միջազգային ֆինանսական կազմակերպությունների արժեթղթեր», 158 «Ռեպո համաձայնագրով վաճառված ամորտիզացված արժեքով հաշվառվող արժեթղթեր», 159 «Ամորտիզացված արժեքով հաշվառվող ընթացիկ ներդրումների արժեզրկման կորուստների պահուստ» ենթաբաժինները:

Բաժնում հաշվառվող ակտիվների հաշվապահական հաշվառումը կատարվում է ստորև ներկայացված սկզբունքների համաձայն, եթե այլ բան նախատեսված չէ ՖՀՄՍ 9 ստանդարտով:

Բաժնում հաշվառվող ակտիվների ձեռքբերման ժամանակ տրվում են հետևյալ հաշվապահական ձևակերպումները.

Դտ- արժեթղթի արտացոլման համապատասխան հաշիվ (ձեռքբերման գին գումարած գործարքի հետ կապված ծախսումներ)

Կտ- դրամական միջոց:

Սկզբնական ճանաչումից հետո ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ հաշվարկված եկամտի չափով տալով հետևյալ հաշվապահական ձևակերպումները՝

Դտ- արժեթղթի արտացոլման համապատասխան հաշիվ,

Կտ- համապատասխան եկամտային հաշիվ:

Ներդրման գծով փաստացի ստացված միջոցները (բացառությամբ տոկոսային արժեթղթերի նկատմամբ անվանական տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտների, որոնք առանձին արտացոլվել են տոկոսային արժեթղթի գծով անվանական տոկոսների համապատասխան հաշվում) կրեդիտագրում են ներդրման համապատասխան հաշիվը և դեբետագրում, դրամական միջոց ստանալու դեպքում, դրամական միջոցների հաշիվը.

Դտ- դրամական միջոց,

Կտ- արժեթղթի արտացոլման համապատասխան հաշիվ:

Տոկոսային արժեթղթերի նկատմամբ անվանական տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտների չափով տրվում են հետևյալ ձևակերպումները.

Դտ- տոկոսային արժեթղթի գծով անվանական տոկոսների համապատասխան հաշիվ,

Կտ- արժեթղթի արտացոլման համապատասխան հաշիվ:

Փաստացի ստացված տոկոսային եկամուտների հաշվապահական ձևակերպումները հետևյալն են.

Դտ- դրամական միջոց,

Կտ- տոկոսային արժեթղթի գծով անվանական տոկոսների համապատասխան հաշիվ:

Այն դեպքում, երբ արժեթղթերը վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, ապա գնահատման ժամանակ առաջացած շահույթը կամ վնասը, հաշվարկված որպես իրական արժեքի և ամորտիզացված արժեքով հաշվառվող արժեթղթի հաշվեկշռային արժեքի միջև եղած տարբերություն, գրանցվում է եկամուտների հաշվետվության մեջ՝ որպես իրացված շահույթ կամ վնաս: Եթե ակտիվը վերադասակարգվում է որպես իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող, ապա վերագնահատման արդյունքը, որպես իրական արժեքի և հաշվեկշռային արժեքի միջև եղած տարբերություն, գրանցվում է այլ համապարփակ եկամտի արտացոլման համար նախատեսված հաշվում:

## **ԲԱԺԻՆ 16**

### **«Ստացվելիք շահաբաժիններ այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից և այլ ընթացիկ պահանջներ նրանց նկատմամբ»**

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 160 «Ստացվելիք շահաբաժիններ այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից», 169 «Այլ ընթացիկ պահանջներ այլ անձանց նկատմամբ»:

#### **Ենթաբաժին 160**

### **«Ստացվելիք շահաբաժիններ այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ասոցացված, համատեղ վերահսկվող կամ դուստր կազմակերպություններում այնպիսի ներդրումներից

ստանալիք շահաբաժինների հաշվառման համար, որոնք, համաձայն ՀՀՄՍ 27 Համախմբված և առանձին ֆինանսական հաշվետվություններ, ՀՀՄՍ 28 Ներդրումներ ասոցացված կազմակերպություններում և ՀՀՄՍ 31 Մասնակցություն համարեղ ձեռնարկումներում ստանդարտների, հաշվառվում են բաժնեմասնակցության մեթոդով:

Ներդրումների հաշվառման հաշվապահական ձևակերպումներն են.

160 «Ստացվելիք շահաբաժիններ այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից» ենթաբաժնի հաշիվները դեբետագրվում են ստացվելիք շահաբաժինները հայտարարելուց հետո՝

Դտ- «Ստացվելիք շահաբաժիններ այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից» ենթաբաժնի հաշիվներ

Կտ- Համապատասխան ներդրման հաշիվ

160 «Ստացվելիք շահաբաժիններ այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից» ենթաբաժնի հաշիվները կրեդիտագրվում են շահաբաժինները ստանալիս՝

Դտ - Դրամական միջոցներ

Կտ- 160 «Ստացվելիք շահաբաժիններ այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից» ենթաբաժնի հաշիվներ:

### **Ենթաբաժին 169**

#### **«Այլ ընթացիկ պահանջներ այլ անձանց նկատմամբ»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են դուստր, համատեղ վերահսկվող և ասոցացված ընկերությունների նկատմամբ այլ ընթացիկ պահանջների հաշվառման համար: Հաշիվները ակտիվային են, դեբետագրվում են պահանջների ավելացման և կրեդիտագրվում՝ դրանց նվազման դեպքում:

### **ԲԱԺԻՆ 17**

#### **«Դեբիտորական պարտքեր, կանխավճարներ և այլ ընթացիկ ակտիվներ»**

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 170 «Դեբիտորական պարտքեր», 171 «Կանխավճարներ աշխատակիցներին և այլ անձանց», 172 «Կանխավճարներ, գերավճարներ բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով», 173 «Հետաձգված հարկային ակտիվներ», 174 «Դեպոնացված գումարներ», 178 «Այլ ընթացիկ ակտիվներ», 179

«Դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների հնարավոր կորուստների պահուստ»:

### **Ենթաբաժին 170 «Դեբիտորական պարտքեր»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են դեբիտորական պարտքերի հաշվառման համար:

**1700 «Դեբիտորական պարտքեր ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի նկատմամբ»**- այս հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերության՝ ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի նկատմամբ ունեցած դեբիտորական պարտքերի հաշվառման համար: Հաշիվը ակտիվային է, մասնավորապես, այն դեբետագրվում է առաջացող դեբիտորական պարտքերի գումարով, կրեդիտագրվում է դրանց մարման գումարով:

**1701-1703** հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1700 հաշվի հաշվառումը:

### **Ենթաբաժին 171 «Կանխավճարներ աշխատակիցներին և այլ անձանց»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերությունների կողմից իրենց աշխատակիցներին և մատակարարներին կանխավճարված գումարների համար:

**1710 «Կանխավճարված աշխատավարձ»**- այս հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերությունների կողմից աշխատողներին կանխավճարված աշխատավարձի և աշխատավարձին հավասարեցված այլ կանխավճարների հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է կանխավճարը տալիս.

Դտ-1710

Կտ-Դրամական միջոցներ:

Հաշիվը կրեդիտագրվում է կանխավճարված աշխատավարձի և աշխատավարձին հավասարեցված այլ կանխավճարների գծով դեբիտորական պարտքը ծախսերով փակելիս՝

Դտ-ծախսային հաշիվներ

Կտ-1710

**1711 «Աշխատակիցներին տրված առհաշիվ գումարներ»**- այս հաշվում հաշվառվում են ապահովագրական ընկերության աշխատակիցներին առհաշիվ տրված այնպիսի գումարները, ինչպիսիք են՝ գործուղումների հետ կապված

կանխավճարները, վճարներն ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար և այլն:

Հաշիվը դեբետագրվում է առհաշիվ գումարներ տրամադրելիս՝

Դտ- 1711

Կտ- Դրամական միջոցներ:

Հաշիվը կրեդիտագրվում է առհաշիվ տրված գումարի օգտագործման վերաբերյալ հաշվետվություն ստանալիս: 1711 հաշվի գումարը դուրս է գրվում այն հաշիվների վրա, որոնց գծով օգտագործվել են այդ միջոցները՝

Դտ- Ծախսեր, ակտիվային հաշիվներ և պասիվային հաշիվներ

Կտ- 1711:

**1712 «Այլ կանխավճարներ ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի նկատմամբ»-** այս հաշվում հաշվառվում են ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերին ապրանքների և ծառայությունների համար տրված կանխավճարները: Ապրանքների ստացման կամ ծառայությունների մատուցման դեպքում կանխավճարներն այս հաշվից փոխանցվում են համապատասխան ակտիվի կամ ծախսի հաշիվ:

Հաշիվը դեբետագրվում է կանխավճար տալիս՝

Դտ- 1712

Կտ- Դրամական միջոցներ:

Հաշիվը կրեդիտագրվում է համապատասխան ապրանքները կամ ծառայությունները ստանալիս՝

Դտ- Ծախսեր, ակտիվային հաշիվներ

Կտ- 1712:

**1713-1714** հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1712 հաշվի հաշվառումը:

## **Ենթաբաժին 172**

### **«Կանխավճարներ, գերավճարներ բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են շահութահարկի, ավելացված արժեքի հարկի, այլ հարկերի և տուրքերի ու պարտադիր սոցիալական ապահովագրության կանխավճարված և գերավճարված գումարների հաշվառման համար:

**1720 «Կանխավճարներ, գերավճարներ շահութահարկի գծով»-** այս հաշվում հաշվառվում են շահութահարկի գծով բյուջեին վճարված կանխավճարները և գերավճարներ:

Կանխավճար (գերավճար) կատարելիս ձևակերպվում է՝

Դտ- 1720

Կտ- Դրամական միջոցներ:



Պարտավորության ժամկետը լրանալիս կանխավճարները դուրս են գրվում այս հաշվից՝ թղթակցելով պարտավորությունների համապատասխան հաշվի հետ՝

Դտ- պարտավորության համապատասխան հաշիվ  
Կտ-1720:

**1721 «Կանխավճարներ, գերավճարներ ավելացված արժեքի հարկի գծով»**- այս հաշվում հաշվառում են ավելացված արժեքի հարկի գծով բյուջեին վճարված կանխավճարները: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1720 հաշվի դեպքում:

**1722 «Կանխավճարներ, գերավճարներ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով»**- այս հաշվում հաշվառում են պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով կատարված կանխավճարները: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1720 հաշվի դեպքում:

**1729 «Այլ կանխավճարված, գերավճարված հարկեր և տուրքեր»**- այս հաշվում հաշվառում են այլ հարկերի և տուրքերի գծով բյուջեին վճարված կանխավճարները և գերավճարները: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1720 հաշվի դեպքում:

#### **Ենթաբաժին 174 «Դեպոնացված գումարներ»**

Այս ենթաբաժնի հաշիվներում արտացոլվում է այլ անձանց մոտ, բացառությամբ վերաապահովագրողների, դեպոնացված գումարների առկայությունն ու շարժը: Հաշիվները դեբետագրվում են դեպոնացված գումարների և նրանց ավելացման դեպքում՝ կրեդիտագրելով դրամական միջոցների հաշիվը: Հաշիվները կրեդիտագրվում են դեպոնացված գումարների ստացման կամ նրանց նվազման դեպքում՝ դեբետագրելով դրամական միջոցների հաշիվը:

#### **Ենթաբաժին 179 «Դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների հնարավոր կորուստների պահուստ»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերությունների դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների հնարավոր կորուստների պահուստների հաշվառման համար: Այս հաշվի հաշվառումը տարվում է համաձայն ՖՀՄՍ 9-ի և ՀՀՄՍ 36-ի: Հաշիվը կրեդիտագրվում է հնարավոր կորուստների գումարով՝ թղթակցելով համապատասխան ծախսային հաշվի հետ, դեբետագրվում է հնարավոր կորուստների պահուստների գումարով:

## **ԴԱՍ 2. Ոչ ընթացիկ ակտիվներ**

### **ԲԱԺԻՆ 20**

#### **«Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ»**

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 200 «Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցներ», 201 «Հիմնական միջոցների ամորտիզացիա», 202 «Շահագործման մեջ գտնվող ոչ նյութական ակտիվներ», 203 «Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա», 204 «Շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ», 205 «Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում», 206 «Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում», 207 «Շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում»: Բաժնում հաշվառվող ակտիվների հաշվապահական հաշվառումը կատարվում է ստորև ներկայացված սկզբունքների համաձայն, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀՄՍ 16, ՀՀՄՍ 36, ՖՀՄՍ 16 ստանդարտներով:

#### **Ենթաբաժին 200**

##### **«Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցներ»**

**2000 «Հող»**- այս հաշվում հաշվառվում են ներդրումներ հողում: Հողը ներկայացվում է ձեռքբերման արժեքով, որը ներառում է գնման գինը՝ ներառյալ բոլոր անհրաժեշտ ծախսերը՝ հողը օգտագործման համար պիտանի դարձնելու նպատակով: Ծախսերի կազմի մեջ մտնում են նաև կոյուղու համակարգի տեղադրման, ճանապարհների կառուցման, հարթեցման և վերականգնման հետ կապված ու նմանատիպ այլ ծախսերը: Հողի արժեքը դուրս չի գրվում (ամորտիզացվում), որովհետև այս տեսակի ակտիվի ծառայության ժամկետը անսահմանափակ է:

Հաշիվը դեբետագրվում է հողի ձեռքբերման դեպքում՝ գնման գնի, իսկ հողի վերագնահատման արդյունքում՝ հողի իրական և հաշվեկշռային արժեքների դրական տարբերության չափով:

Հաշիվը կրեդիտագրվում է հողի օտարման դեպքում՝ հաշվեկշռային արժեքի չափով, իսկ հողի վերագնահատման արդյունքում՝ հողի իրական և հաշվեկշռային արժեքների բացասական տարբերության չափով:

**2001 «Շենքեր, շինություններ»**- այս հաշվում հաշվառվում են ապահովագրական ընկերության շենքերում (տարածքում) կատարված ընդհանուր ներդրումները: Շենքերը ներկայացվում են ձեռքբերման արժեքով, որը ներառում է շենքի, տարածքի պատրաստման ծախսերը, ինչպիսիք են՝ հիմք փորելը, փոխադրման և տեղադրման ծախսերը, ճարտարապետների և ուսումնասիրողների վարձավճարը, շինարարական ծախսերը և բոլոր այն անհրաժեշտ ծախսերը, որոնք

կատարվում են տվյալ ակտիվն օգտագործման համար պիտանի դարձնելու համար: Ակտիվը բարելավելու համար կատարված այն ծախսերը, որոնք հաջորդում են նրա սկզբնական ձեռքբերման արժեքին և բարձրացնում են ակտիվի արդյունավետությունը կամ ավելացնում դրա օգտագործման տևողությունը, պետք է ավելացվեն ակտիվի հաշվեկշռային արժեքին:

Հաշիվը դեբետագրվում է շենքի և շինությունների ձեռքբերման և հետագայում դրանց օգտակար ծառայությունն ավելացնելու համար կապիտալ ներդրումների կատարման դեպքում: Հաշիվը դեբետագրվում է նաև շենքի և շինությունների վերագնահատման արդյունքում՝ շենքի և շինությունների իրական հաշվեկշռային արժեքների դրական տարբերության չափով:

Հաշիվը կրեդիտագրվում է շենքի և շինությունների օտարման և դուրսգրման դեպքում: Հաշիվը կրեդիտագրվում է նաև շենքի և շինությունների վերագնահատման արդյունքում՝ դրանց իրական հաշվեկշռային արժեքների բացասական տարբերության չափով:

**2002 «Գույք և գրասենյակային սարքավորումներ»**– այս հաշվում հաշվառվում են ապահովագրական ընկերության գործունեության համար օգտագործվող գույքի և գրասենյակային սարքավորումների (օրինակ՝ սեղան, աթոռ, պահարան, բազկաթոռ, դարակաշար, չիրկիզվող պահարան և այլն) համար կատարված ներդրումները: Գույքը և գրասենյակային սարքավորումները հաշվեկշռում գրանցվում են իրենց ձեռքբերման արժեքով, որը ներառում է չփոխհատուցվող (չհաշվանցվող) հարկերը, տեղափոխման, տեղադրման ծախսերը և տվյալ ակտիվն օգտագործման համար պիտանի դարձնելու բոլոր անհրաժեշտ ծախսերը: Հետագայում հաշվառումը տարվում է իրական արժեքով:

Հաշիվը դեբետագրվում է գույքի և գրասենյակային սարքավորումների ձեռքբերման և հետագայում դրանց օգտակար ծառայությունը երկարացնելու ու բարելավելու համար կապիտալ ներդրումների կատարման դեպքում, ինչպես նաև գույքի ու գրասենյակային սարքավորումների վերագնահատման արդյունքում դրանց իրական և հաշվեկշռային արժեքների դրական տարբերության չափով:

Հաշիվը կրեդիտագրվում է գույքի և գրասենյակային սարքավորումների օտարման ու դուրսգրման, գույքի և գրասենյակային սարքավորումների վերագնահատման արդյունքում՝ դրանց իրական գնի արժեքների բացասական տարբերության չափով:

**2003 «Կապի և հաղորդակցման միջոցներ, հաշվողական, համակարգչային և ավտոմատ կառավարման այլ տեխնիկա»**– այս հաշվում հաշվառվում են ապահովագրական ընկերության գործունեության համար օգտագործվող համակարգիչների և հաղորդակցման սարքավորումների համար կատարված ներդրումները: Դրանք ներկայացվում են ձեռքբերման արժեքով, որը ներառում է չփոխհատուցվող (չհաշվանցվող) հարկերը, տեղափոխման ծախսերը և այլ

անհրաժեշտ ծախսեր, որոնք կատարվում են այդ ակտիվներն օգտագործման համար պիտանի դարձնելու նպատակով:

«Կապի և հաղորդակցման միջոցներ, հաշվողական, համակարգչային և ավտոմատ կառավարման այլ տեխնիկա»՝ հաշվեկշռում գրանցվում են ձեռքբերման արժեքով, հետագայում՝ իրական արժեքով:

Հաշիվը դեբետագրվում է կապի և հաղորդակցման միջոցներ, հաշվողական, համակարգչային և ավտոմատ կառավարման այլ տեխնիկա ձեռք բերելու և հետագայում դրանց օգտակար ծառայությունն ավելացնելու համար կապիտալ ներդրումների կատարման դեպքում: Հաշիվը դեբետագրվում է նաև նշված ներդրումների վերագնահատման արդյունքում՝ դրանց իրական հաշվեկշռային արժեքների դրական տարբերության չափով:

Հաշիվը կրեդիտագրվում է կապի և հաղորդակցման միջոցներ, հաշվողական, համակարգչային և ավտոմատ կառավարման այլ տեխնիկայի օտարման և դուրսգրման դեպքում: Հաշիվը կրեդիտագրվում է նաև նշված ներդրումների վերագնահատման արդյունքում՝ դրանց իրական ու հաշվեկշռային արժեքների բացասական տարբերության չափով:

**2004 «Փոխադրամիջոցներ»**– այս հաշվում հաշվառվում են ապահովագրական ընկերության գործունեության համար օգտագործվող փոխադրամիջոցների համար կատարված ներդրումները: Այս ներդրումները ներկայացվում են ձեռքբերման արժեքով, որը ներառում է չփոխհատուցվող (չհաշվանցվող) հարկերը, տեղափոխման ծախսերը և այլ անհրաժեշտ ծախսերը, որոնք կատարվում են այդ ակտիվներն օգտագործման համար պիտանի դարձնելու նպատակով: Հետագայում հաշվառվումը տարվում է իրական արժեքով:

Հաշիվը դեբետագրվում է փոխադրամիջոցների ձեռքբերման և հետագայում դրանց օգտակար ծառայությունը ավելացնելու համար կապիտալ ներդրումների կատարման դեպքում: Հաշիվը դեբետագրվում է նաև փոխադրամիջոցների վերագնահատման արդյունքում՝ դրանց իրական և հաշվեկշռային արժեքների դրական տարբերության չափով:

Հաշիվը կրեդիտագրվում է փոխադրամիջոցների օտարման և դուրսգրման, ինչպես նաև փոխադրամիջոցների վերագնահատման արդյունքում՝ դրանց իրական ու հաշվեկշռային արժեքների բացասական տարբերության չափով:

**2005 «Այլ հիմնական միջոցներ»**– այս հաշվում հաշվառվում են ապահովագրական ընկերության գործունեության համար օգտագործվող այն հիմնական միջոցների համար կատարված ներդրումները, որոնց համար առանձին հաշիվներ նախատեսված չեն: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 2001, 2002, 2003, 2004 հաշիվների դեպքում:

**2006 «Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ հիմնական միջոցներ)»** – հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերության կողմից

օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հիմնական միջոցներ) հաշվառման համար: Հաշվի հաշվառումն իրականացվում է համաձայն ՖՀՄՍ 16-ի:

Հաշիվը դեբետագրվում է հիմնական միջոցների վարձակալության վերցման դեպքում՝ վարձակալության գծով, ՖՀՄՍ 16-ի համաձայն վճարման ենթակա գումարների ներկա արժեքի և ստանդարտով սահմանված այլ օգտագործման իրավունքի արժեքի մաս կազմող այլ բաղադրիչների (ուղղակի վճարած գումարներ, ապատեղակայանման և զբաղեցրած տեղանքի վերականգնման ծախսեր, այլ) հանրագումարի չափով՝

Դտ - 2006

Կտ - 4301

Կտ - դրամական միջոցներ և/կամ պարտավորության համապատասխան հաշիվ:

Հաշիվը կարող է դեբետագրվել նաև վարձակալության գծով պարտավորության վերաչափման դեպքում, ինչպես նաև ձևափոխման արդյունքում այն ավելացումների դեպքերում, որոնք չեն դիտվել առանձին վարձակալություն.

Դտ - 2006

Կտ - 4301:

Հաշիվը կրեդիտագրվում է վարձակալության վերցված հիմնական միջոցների վարձակալին սեփականության իրավունքով անցնելու դեպքում՝

Դտ - Հիմնական միջոցներ

Կտ - 2006:

Վարձակալության գծով պարտավորության վերաչափման դեպքում.

Դտ - 4301

Կտ - 2006:

## **Ենթաբաժին 201**

### **«Հիմնական միջոցների ամորտիզացիա»**

Այս ենթաբաժնում հաշվառվում են շահագործման մեջ գտնվող և շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցների ամորտիզացիայի գումարները: Հիմնական միջոցների ամորտիզացիան կատարվում է դրանց օգտակար ծառայության ընթացքում՝ ապահովագրական ընկերության կողմից ընտրված մեթոդով: Հաշիվները կարգավորող են: Հաշիվների կրեդիտում գրանցվում են հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսերի կուտակումները:

## **Ենթաբաժին 202**

### **«Շահագործման մեջ գտնվող ոչ նյութական ակտիվներ»**

**2020 «Համակարգչային ծրագրեր»-** հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերության կողմից ձեռք բերված կամ ապահովագրական ընկերության կողմից մշակված համակարգչային ծրագրերի գծով կատարված ծախսումները հաշվառելու համար: Համակարգչային ծրագրերի գծով կատարված ծախսումները հաշվեկշռում ճանաչվում են որպես ակտիվ և պարբերաբար դուրս են գրվում (ամորտիզացվում են) հաշվարկված օգտակար տևողության ընթացքում:

**2021 «Լիցենզիաներ և վստահագրեր»-** հաշիվը նախատեսված է լիցենզիաների և վստահագրերի ձեռքբերման նպատակով ապահովագրական ընկերության կատարած ծախսումների հաշվառման համար: Նշված ծախսումները հաշվեկշռում ճանաչվում են որպես ակտիվ և պարբերաբար դուրս են գրվում (ամորտիզացվում են) հաշվարկված օգտակար տևողության ընթացքում:

**2022 «Հեղինակային իրավունքներ, արտոնագրեր»** -հաշիվը նախատեսված է հեղինակային իրավունքների և արտոնագրերի ձեռքբերման նպատակով ապահովագրական ընկերության կատարած ծախսումների հաշվառման համար: Նշված ծախսումները հաշվեկշռում ճանաչվում են որպես ակտիվ և պարբերաբար դուրս են գրվում (ամորտիզացվում են) հաշվարկված օգտակար տևողության ընթացքում:

**2023 «Այլ ոչ նյութական ակտիվներ»-** այս հաշվում հաշվառվում են այն ոչ նյութական ակտիվները, որոնց հաշվառման համար առանձին հաշիվներ նախատեսված չեն:

**2024 «Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ)»-** հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերության կողմից Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ) հաշվառման համար: Այս հաշվի հաշվառումը կատարվում է նույն սկզբունքով, ինչպես 2006 հաշվի դեպքում է:

### **Ենթաբաժին 203**

#### **«Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են շահագործման մեջ գտնվող և շահագործման մեջ չգտնվող ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի (մաշվածքի) գումարները հաշվառելու համար: Հաշիվները ակտիվապասիվային են:

Հաշիվների կրեդիտում գրանցվում են ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսերի կուտակումները:

#### **Ենթաբաժին 204**

### **«Շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ»**

Այս ենթաբաժնում ներառված հաշիվները նախատեսված են ծառայությունից դուրս գտնվող և/կամ օտարման ենթակա հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվառման համար: Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ծառայությունից դուրս գալու ժամանակ ակտիվի մնացորդային արժեքի չափով այս հաշիվները դեբետագրվում են:

Հաշիվները կրեդիտագրվում են դեռևս չշահագործված ակտիվները շահագործման հանձնելիս՝

Դտ - Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Կտ – 204 «Շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ»:

Հաշիվները կրեդիտագրվում են նաև ծառայությունից դուրս հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարման դեպքում: Օտարման արդյունքում դրանց վաճառքի գնի և դրանց հաշվեկշռային արժեքի միջև եղած տարբերությունը դեբետագրվում/կրեդիտագրվում է ակտիվների օտարումից առաջացող վնասների կամ օգուտների հաշիվներին:

#### **Ենթաբաժին 205**

### **«Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերության կողմից հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների ձեռքբերման և բարելավման համար կատարված ծախսումները արտացոլելու համար:

**2050 «Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում»**- այս հաշիվը նախատեսված է հիմնական միջոցներ ձեռք բերելու կամ կառուցելու վրա կատարված ծախսումները հաշվառելու համար:

Կապիտալ ներդրումների գծով ռեզիդենտներին տրամադրված գումարները կատարողական ակտերի հիման վրա վերագրանցվում են որպես կապիտալ ներդրումներ ապահովագրական ընկերության հիմնական միջոցներում՝

Դտ- 2050 «Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում»

Կտ- կապիտալ ներդրումների գծով ռեզիդենտներին տրամադրված գումարների արտացոլման համապատասխան հաշիվ:

Հաշիվը կրեդիտագրվում է հիմնական միջոցի օբյեկտը շահագործման հանձնելիս՝

Դտ- Հիմնական միջոցների համապատասխան հաշիվ

Կտ- 2050:

2050 հաշիվն օգտագործվում է նաև առկա հիմնական միջոցների բարելավմանն ուղղվող ծախսերի հաշվառման համար: Բարելավման աշխատանքներն ավարտելուց հետո այդ ծախսումները կապիտալացվում են՝ ավելացվելով հիմնական միջոցների արժեքին կամ դուրս են գրվում ապահովագրական ընկերության ծախսերով: Կատարված ծախսումների կապիտալացման կամ ծախսերով դուրսգրման չափանիշները ներկայացված են ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտում:

### **Ենթաբաժին 206**

#### **«Շահագործման մեջ գտնող հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում»**

Այս բաժնում ներառված հաշիվները նախատեսված են շահագործման մեջ գտնվող և ոչ նյութական ակտիվների արժեզրկման հաշվառման համար: Հաշվառումը տարվում է համաձայն ՀՀՄՍ 36-ի:

**2060 «Հիմնական միջոցների արժեզրկում»**–այս հաշիվը նախատեսված է հիմնական միջոցների արժեզրկումը հաշվառելու համար: Հաշիվը կրեդիտագրվում է հիմնական միջոցների արժեզրկման դեպքում՝

Դտ- համապատասխան ծախսային հաշիվ

Կտ- 2060 «Հիմնական միջոցների արժեզրկում»:

Հաշիվը դեբետագրվում է՝

ա) արժեզրկման հակադարձման դեպքում՝

Դտ- 2060 «Հիմնական միջոցների արժեզրկում»

Կտ- Հիմնական միջոցների գծով արժեզրկման կորուստի հակադարձումից եկամուտների արտացոլման համապատասխան հաշիվ,

բ) ակտիվների լրիվ արժեզրկման ժամանակ՝

Դտ- 2060 «Հիմնական միջոցների արժեզրկում»

Կտ- Հիմնական միջոցները հաշվառող համապատասխան հաշիվներ:

Ենթաբաժին 206-ում ընդգրկված մնացած հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչպես 2060 հաշիվի դեպքում է:

### **Ենթաբաժին 207**

#### **«Շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում»**



Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերությանը պատկանող, սակայն շահագործումից դուրս գտնվող հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկման հաշվառման համար: Այս ենթաբաժնում ընդգրկված հաշիվների հաշվառումը կատարվում է նույն սկզբունքով, ինչ որ 206 ենթաբաժնի հաշիվների հաշվառումը:

### **Ենթաբաժին 208**

#### **«Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ) կապիտալ ներդրումների ամորտիզացիա»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ) կատարված կապիտալ ներդրումների ամորտիզացիայի (մաշվածքի) գումարները հաշվառելու համար: Այս ենթաբաժնում ընդգրկված հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչպես 201 ենթաբաժնի դեպքում է:

### **ԲԱԺԻՆ 21**

#### **«Ոչ ընթացիկ ներդրումներ և տրամադրված ոչ ընթացիկ փոխառություններ»**

Այս բաժնում ներառված են 210 «Ոչ ընթացիկ ավանդներ», 211 «Այլ ոչ ընթացիկ ներդրումներ», 212 «Բանկերին տրամադրված ոչ ընթացիկ փոխառություններ», 213 «Ապահովագրական ընկերություններին տրամադրված ոչ ընթացիկ փոխառություններ», 214 «Ներդրումային ընկերություններին տրամադրված ոչ ընթացիկ փոխառություններ», 215 «Վարկային կազմակերպություններին տրամադրված ոչ ընթացիկ փոխառություններ», 216 «Այլ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված ոչ ընթացիկ փոխառություններ», 217 «Այլ անձանց տրամադրված ոչ ընթացիկ փոխառություններ», 219 «Ոչ ընթացիկ ներդրումների և փոխառությունների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) պահուստ» ենթաբաժինները:

Այս բաժնի հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 12 «Ընթացիկ ներդրումներ և փոխառություններ» բաժնի հաշիվների հաշվառումը:

### **ԲԱԺԻՆ 22**

#### **«Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ»**

Այս բաժնում ներառված են հետևյալ ենթաբաժինները. 220 «ՀՀ ԿԲ արժեթղթեր», 221 «ՀՀ պետական արժեթղթեր», 222 «ՀՀ ոչ պետական արժեթղթեր», 223 «Այլ երկրների պետական արժեթղթեր», 224 «Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր», 225 «Միջազգային ֆինանսական կազմակերպությունների արժեթղթեր», 226 «Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր»:

Այս բաժնի հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 14 «Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» բաժնի հաշիվների հաշվառումը:

## **ԲԱԺԻՆ 23**

### **«Ամորտիզացված արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ»**

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 230 «ՀՀ ԿԲ արժեթղթեր», 231 «ՀՀ պետական արժեթղթեր», 232 «ՀՀ ոչ պետական արժեթղթեր», 233 «Այլ երկրների պետական արժեթղթեր», 234 «Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր», 235 «Միջազգային ֆինանսական կազմակերպությունների արժեթղթեր», 236 «Ռեպո համաձայնագրով վաճառված ամորտիզացված արժեքով հաշվառվող արժեթղթեր», 239 «Ամորտիզացված արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումների արժեզրկման կորուստների պահուստ»:

Այս բաժնի հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 15 «Ամորտիզացված արժեքով հաշվառվող ընթացիկ ներդրումներ» բաժնի հաշիվների հաշվառումը:

## **ԲԱԺԻՆ 24**

### **«Ոչ ընթացիկ ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում և այլ ոչ ընթացիկ պահանջներ նրանց նկատմամբ»**

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 240 «Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում», 248 «Այլ ոչ ընթացիկ պահանջներ այլ անձանց նկատմամբ» և 249 «Այլ անձանց կանոնադրական կապիտալներում ներդրումների և նրանց նկատմամբ պահանջների արժեզրկման պահուստ»:

Այս բաժնի հաշվառումը տարվում է ՀՀՄՍ 27 «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ և դուստր ընկերություններում ներդրումների հաշվառում», ՀՀՄՍ

28 «Ասոցացված կազմակերպություններում ներդրումների հաշվառում», ՀՀՄՍ 31 «Համատեղ ձեռնարկումներում մասնակցության արտացոլումը ֆինանսական հաշվետվություններում» և ՀՀՄՍ 36 «Ակտիվների արժեզրկում» ստանդարտների համաձայն:

Այս հաշիվների արտարժույթային մնացորդները վերագնահատվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանվող հաշվարկային փոխարժեքով:

Բաժնում հաշվառվող ակտիվների հաշվապահական հաշվառումը կատարվում է ստորև ներկայացված սկզբունքների համաձայն, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀՄՍ 12, ՀՀՄՍ 27, ՀՀՄՍ 28, ՀՀՄՍ 31, ՀՀՄՍ 36, ՖՀՄՍ 5 ստանդարտներով:

### **Ենթաբաժին 240**

#### **«Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում»**

Այս ենթաբաժնում ներառված հաշիվները նախատեսված են կապակցված կազմակերպություններում ներդրումների հաշվառման համար:

Կապակցված կազմակերպություններում ներդրումները հաշվառվում են ՀՀՄՍ 28-ի համաձայն: Ներդրումների արժեզրկման հաշվառումը տարվում է ՀՀՄՍ 36 «Ակտիվների արժեզրկում» ստանդարտի համաձայն:

### **Ենթաբաժին 248**

#### **«Այլ ոչ ընթացիկ պահանջներ այլ անձանց նկատմամբ»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերության կողմից կապակցված կազմակերպությունների նկատմամբ այլ պահանջների հաշվառման համար: Հաշիվը ակտիվային է, դեբետագրվում է պահանջների առաջացման դեպքում, կրեդիտագրվում է դրանց մարման դեպքում:

### **Ենթաբաժին 249**

#### **«Այլ անձանց կանոնադրական կապիտալներում ներդրումների և նրանց նկատմամբ պահանջների արժեզրկման պահուստ»**

**2490 «Այլ անձանց կանոնադրական կապիտալներում ներդրումների և նրանց նկատմամբ պահանջների արժեզրկման պահուստ»**- հաշվառումը տարվում է ՀՀՄՍ 36 ստանդարտի համաձայն: Պահուստին հատկացումներ կատարվում են՝ հիմք ընդունելով ներդրումների փոխհատուցվող գումարը: Այն սահմանվում է որպես ներդրման վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնը:

Հաշիվը կրեդիտագրվում է ներդրումների և/կամ այլ պահանջների արժեզրկման նախանշանի առկայության դեպքում դրանց փոխհատուցվող գումարի և հաշվեկշռային արժեքի տարբերության չափով՝

Դո- համապատասխան ծախսային հաշիվ

Կտ- 2490:

Հաշիվը դեբետագրվում է՝

ա) արժեզրկումից կորուստի վերականգնման դեպքում՝

Դտ -2490

Կտ - համապատասխան ծախսային հաշիվ

բ) լրիվ արժեզրկման դեպքում՝ ներդրման հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում 2490 «Այլ անձանց կանոնադրական կապիտալներում և նրանց նկատմամբ պահանջների արժեզրկման պահուստ» հաշվին: Ընդ որում, նախ՝ դուրս է գրվում ներդրման գծով առկա գույքիլը (եթե այդպիսին գոյություն ունի), ապա՝ ներդրման արժեքը՝

Դտ -2490

Կտ -Համապատասխան ներդրման հաշիվ:

## **ԲԱԺԻՆ 25**

### **«Այլ ոչ ընթացիկ ակտիվներ»**

Այս բաժինը ներառում է 250 «Հետաձգված հարկային ոչ ընթացիկ ակտիվներ», 251 «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ», 252 «Այլ ոչ ընթացիկ ակտիվներ»:

25 ենթաբաժնի հաշվառումը տարվում է համաձայն ՀՀՄՍ 12-ի, ՖՀՄՍ 5-ի:

### **Ենթաբաժին 251**

#### **«Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերության կողմից որպես վաճառքի համար պահվող դասակարգված ոչ ընթացիկ ակտիվների հաշվառման համար: Կազմակերպությունը պետք է ոչ ընթացիկ ակտիվը (կամ օտարման խումբը) դասակարգի որպես վաճառքի համար պահվող, եթե դրա հաշվեկշռային արժեքը փոխհատուցվելու է հիմնականում վաճառքի գործարքի, այլ ոչ թե շարունակական օգտագործման միջոցով:

Ակտիվի (կամ օտարման խմբի) որպես վաճառքի համար պահվող սկզբնական դասակարգումից անմիջապես առաջ, ակտիվի (կամ խմբի բոլոր ակտիվների ու պարտավորությունների) հաշվեկշռային արժեքները պետք է չափվեն կիրառելի ՖՀՄՍ-ներին համապատասխան: Որպես վաճառքի համար պահվող դասակարգվելուց հետո, տրվում են հետևյալ ձևակերպումները.

Դտ- 251

Կտ- 20-րդ բաժնի համապատասխան հաշիվ:

Ակտիվի հետագա չափումը տրվում է համապատասխան եկամտային կամ ծախսային հաշվի հետ թղթակցելով:

### **ԴԱՍ 3. «Ընթացիկ պարտավորություններ»**

#### **ԲԱԺԻՆ 30**

##### **«Ապահովագրության գծով պարտավորություններ»**

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 300 «Ուղղակի ապահովագրության մնացորդային ծածկույթի գծով պարտավորություններ», 301 «Համաապահովագրության մնացորդային ծածկույթի գծով պարտավորություններ», 302 «Վերաապահովագրության մնացորդային ծածկույթի գծով պարտավորություններ», 303 «Պահվող վերաապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ», 305 «Կրած պահանջներ ուղղակի ապահովագրության գծով, 306 «Կրած պահանջներ ուղիղ հատուցումների գծով», 307 «Կրած պահանջներ համաապահովագրության գծով», 308 «Կրած պահանջներ վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով», 309 «Այլ պահուստներ»:

#### **Ենթաբաժին 300**

##### **«Ուղղակի ապահովագրության մնացորդային ծածկույթի գծով պարտավորություններ»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ուղղակի ապահովագրության մնացորդային ծածկույթի գծով պարտավորությունները հաշվառելու համար:

**3000 «Չվաստակած ապահովագրավճարների պահուստ ապահովագրավճարների մեթոդով հաշվարկված»** հաշիվը օգտագործվում է ՖՀՄՍ 17-ով նկարագրված ապահովագրավճարների բաշխման մեթոդով հաշվառում իրականացնելիս: Հաշիվը կրեդիտագրվում է ստացված ապահովագրավճարի չափով՝ թղթակցելով դրամական միջոցների հետ.

Դտ- դրամական միջոցներ

Կտ- 300 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

3000 հաշիվը դեբետագրվում է կատարված ձեռքբերման ծախսի չափով թղթակցելով 1020 կամ 1021 հաշիվների հետ:

Ձեռքբերման ծախսերի ամորտիզացիայի համար հաշիվը կրեդիտագրվում է թղթակցելով 7080 ծախսային հաշվի հետ:

3000 հաշիվը դեբետագրվում է նաև վաստակած եկամտի չափով՝ թղթակցելով համապատասխան եկամտային հաշվի հետ:

3001-3004 հաշվիները հանդիսանում են ՖՀՄՍ 17-ով սահմանված պայմանագրերի կատարման գծով դրամական հոսքեր: Փողի ժամանակային արժեքի և ֆինանսական ռիսկի ազդեցությունը արտացոլելու համար հաշիվները դեբետագրվում և կրեդիտագրվում են թղթակցելով ապահովագրության գծով ֆինանսական եկամուտների և ծախսերի՝ 6081 և 7081 հաշիվների հետ:

3001-3004 հաշիվները դեբետագրվում և կրեդիտագրվում են նաև անբարենպաստ պայմանագրերի դեպքում պայմանագրերի կատարման գծով դրամական արտահոսքերի և ներհոսքերի տարբերության չափով:

**3001 «Գնահատված հատուցումների գծով պարտավորություն»** հաշիվը նախատեսված է ապահովագրական պայմանագրերի խմբի հատուցումների գծով գնահատված դրամական արտահոսքերը հաշվառելու համար: Հաշիվը կրեդիտագրվում է պայմանագրերի ճանաչման ժամանակ գնահատված գումարի մեծությամբ՝ թղթակցելով դրամական միջոցների կամ 104 բաժնի ստացվելիք ապահովագրավճարների համապատասխան հաշվի հետ: Հաշիվը դեբետագրվում է ներկայացված, սակայն չկարգավորված պահուստի չափով՝ թղթակցելով 3050 «Ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստ» հաշվի հետ, պայմանագրերի դադարեցման դեպքում պարտավորության նվազման չափով՝ թղթակցելով 3004 «Ապահովադիրներին հետ վերադարձվող ապահովագրավճարներ» հաշվի հետ:

**3002 «Գնահատված կարգավորման ծախսեր»** հաշիվը նախատեսված է ապահովագրության պայմանագրերի խմբի գծով գնահատված կարգավորման ծախսերի հաշվառման համար: Հաշիվը կրեդիտագրվում է թղթակցելով դրամական միջոցների կամ 104 բաժնի ստացվելիք ապահովագրավճարների համապատասխան հաշվի հետ և դեբետագրվում 1022 հաշվի հետ՝ մինչև ապահովագրության պայմանագրերի ճանաչումը կատարված կարգավորման ծախսի չափով: Հաշիվը դեբետագրվում է նաև ներկայացված, սակայն չկարգավորված պահուստի չափով՝ թղթակցելով 3050 «Ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստ» հաշվի հետ, պայմանագրերի դադարեցման դեպքում պարտավորության նվազման չափով՝ թղթակցելով 3004 «Ապահովադիրներին հետ վերադարձվող ապահովագրավճարներ» հաշվի հետ:

**3003 «Ապահովագրության պայմանագրերի գծով ձեռքբերման ծախսեր»** հաշիվը նախատեսված է ապահովագրության պայմանագրերի խմբի գծով ձեռքբերման ծախսերի հաշվառման համար: Հաշիվը կրեդիտագրվում է թղթակցելով դրամական միջոցների կամ 104 բաժնի ստացվելիք ապահովագրավճարների համապատասխան հաշվի հետ և դեբետագրվում 1020 կամ 1021 հաշվի հետ՝ մինչև ապահովագրության պայմանագրերի ճանաչումը կատարված ձեռքբերման ծախսի չափով: Հաշիվը դեբետագրվում է թղթակցելով դրամական միջոցներ հաշվի հետ ձեռքբերման ծախսերի վճարման դեպքում կամ համապատասխան պարտավորությունների հաշիվների հետ:

**3004 «Ապահովադիրներին հետ վերադարձվող ապահովագրավճարներ»** հաշվում արտացոլվում են դադարեցված պայմանագրերի գծով ապահովադիրների վերադարձման ենթակա գումարները: Հաշիվը կրեդիտագրվում է թղթակցելով 3000 «Չվաստակած ապահովագրավճարների պահուստ ապահովագրավճարների բաշխման մեթոդով հաշվարկված» կամ 3001, 3002, 3003, 3005, 3006, 3007 հաշիվների հետ և դեբետագրվում է թղթակցելով դրամական միջոցների հաշիվների հետ:

**3005 «Պայմանագրի կատարման գծով այլ դրամական հոսքեր»** հաշվում հաշվառվում են ՖՀՄՍ 17-ի Բ65 պարագրաֆում թվարկված այն դրամական հոսքերի գնահատված մեծությունները, որոնք չեն արտացոլվել 3001-3003 հաշիվներում:

**3006 «Պայմանագրային ծառայությունների մարժա»** հաշիվը օգտագործվում է ՖՀՄՍ 17-ով նկարագրված հիմնական մոտեցման կիրառման դեպքում: Նախատեսված է ապահովագրության պայմանագրերի գծով չվաստակած եկամուտը արտացոլելու համար: Հաշիվը դեբետագրվում է վաստակած եկամտի չափով՝ թղթակցելով համապատասխան եկամտային հաշվի հետ և վերադարձվող ապահովագրավճարների չափով՝ թղթակցելով 3004 «Ապահովադիրներին հետ վերադարձվող ապահովագրավճարներ» հաշվի հետ: Հաշիվը կրեդիտագրվում է պայմանագրերով նախատեսված ապահովագրավճարների և պայմանագրերի կատարման գծով դրամական հոսքերի տարբերության չափով:

**3007 «Ռիսկի ճշգրտում»** հաշիվը օգտագործվում է ՖՀՄՍ 17-ով նկարագրված հիմնական մոտեցման կիրառման դեպքում: Նախատեսված է ճշգրտելու ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի գնահատումը՝ արտացոլելու փոխհատուցումը, որը ընկերությունը պահանջում է ոչ ֆինանսական ռիսկի հետևանքով առաջացած՝ դրամական հոսքերի գումարի և ժամկետի վերաբերյալ անորոշությունը կրելու համար: Հաշիվը դեբետագրվում և կրեդիտագրվում է թղթակցելով համապատասխանաբար 6080 և 7080 հաշիվների հետ:

### **Ենթաբաժին 301**

#### **«Համաապահովագրության մնացորդային ծածկույթի գծով պարտավորություններ»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են համաապահովագրության մնացորդային ծածկույթի գծով պարտավորությունների հաշվառման համար: Հաշիվների հաշվառումը տարվում է նույն կերպ, ինչ 300 ենթաբաժնի հաշիվներին:

**Ենթաբաժին 302**  
**«Վերաապահովագրության մնացորդային ծածկույթի գծով**  
**պարտավորություններ»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են վերաապահովագրող ընկերությունների կողմից վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով պարտավորությունների հաշվառման համար:

Այս ենթաբաժնի հաշիվների հաշվառումը տարվում է նույն կերպ, ինչ 300 ենթաբաժնի հաշիվներինը:

**Ենթաբաժին 303**  
**«Պահվող վերաապահովագրության պայմանագրերի գծով**  
**պարտավորություններ»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են վերաապահովագրության փոխանցած ռիսկերի գծով վերաապահովագրական պարտավորությունների հաշվառման համար:

**3030 «Վերաապահովագրության պայմանագրերի գծով պատավորություններ հաշվարկված ապահովագրավճարների բաշխման մեթոդով»** հաշվում հաշվառումը տարվում է նույն կերպ ինչ 1043-1045 հաշիվները հակառակ թղթակցումներով:

**3031 «Փոխանցվելիք վերաապահովագրավճարներ վերաապահովագրողներին»** հաշվում արտացոլվում է վերաապահովագրողին փոխանցվելիք վերաապահովագրավճարի մեծությունը նվազեցված վերաապահովագրողների ստացվելիք պարգևավճարների մեծությամբ՝ հետևյալ ձևակերպումներով.

Դտ - 108 ենթաբաժնի համապատասխան հաշիվներ,

Կտ - 3031:

**Ենթաբաժին 305**  
**«Կրած պահանջներ ուղղակի ապահովագրության գծով»**

Այս ենթաբաժնում արտացոլվում են կրած պահանջների գծով պարտավորությունները: Հաշիվները պասիվային են, կրեդիտում արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ պարտավորության/պահուստի մեծությունը, իսկ դեբետում՝ դրա հակադարձումը, հատուցումների վճարումը:



**3050 «Ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստ»**  
և **3051 «Տեղի ունեցած, սակայն դեռևս չներկայացված պահանջների պահուստ»**  
կրեդիտագրվում է թղթակցելով 300 ենթաբաժնի համապատասխան հաշիվների կամ համապատասխան ծախսային հաշիվների հետ:

Հաշիվները դեբետագրվում են թղթակցելով 1030 հաշվի հետ:

Պահուստ հակադարձելիս, հատուցումների վճարման նպատակով պահուստից նվազեցում կատարելիս ձևակերպվում է.

Դտ- 3050 կամ 3051 (ճշգրտման չափով)

Կտ- 300 ենթաբաժնի համապատասխան հաշիվը (ճշգրտման չափով) կամ վճարվելիք հատուցումներ:

3052-3054 հաշիվները նախատեսված են վճարվելիք հատուցումները արտացոլելու համար: Հաշիվները պասիվային են, կրեդիտագրվում են՝ թղթակցելով համապատասխան պահուստի հաշիվների հետ, իսկ դեբետագրվում են թղթակցելով դրամական միջոցների հաշիվների հետ:

**3055 «Հատուցումների գծով կանխավճարային գումարներ»** հաշվում արտացոլվում են ապահովագրական ընկերության կողմից ապահովագրական հատուցման (ներառյալ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքով նախատեսված Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցման) համար վճարված գումարները (կանխավճարային գումարներ) այն դեպքում, երբ տվյալ ապահովագրական պատահարի հետ կապված հատուցումը բավարարելու կամ մերժելու որոշումը չի կայացվել: Հաշիվը պասիվային կարգավորող է:

Հաշիվը դեբետագրվում է թղթակցելով դրամական միջոցների հետ և կրեդիտագրվում է թղթակցելով 3050 կամ 3052-3054 համապատասխան հաշիվների հետ:

**3056 «Սուբրոգացիայի հետևանքով առաջացած պահանջներ».** Այս հաշիվը նախատեսված է վնասի պահանջի իրավունքի ստացման (սուբրոգացիայի) դեպքում ապահովագրական ընկերության կողմից այլ անձանց նկատմամբ ձեռք բերված պահանջների հաշվառման համար: Հաշիվը պասիվային կարգավորող է:

Պահանջների գծով ստացվելիք գումարով ձևակերպվում է.

Դտ- 3056

Կտ- համապատասխան եկամտային հաշիվ:

Պահանջների գծով ստացված գումարների գծով ձևակերպվում է.

Դտ-Դրամական միջոցներ

Կտ- 3056:

## Ենթաբաժին 306

**«Կրած պահանջներ ուղիղ հատուցումների գծով»**

**3060 «Վճարվելիք գումարներ ապահովագրական ընկերություններին ուղիղ հատուցումների գծով»** - հաշիվը կրեդիտագրվում է այլ ապահովագրական ընկերության կողմից տվյալ ապահովագրական ընկերության հատուցումների և կարգավորման ծախսերի գծով վճարում կատարելիս և դեբետագրվում է գումարների վերադարձման դեպքում, ինչպես նաև ճշգրտվում է վերջնահաշվարկի արդյունքում:

- Ուղիղ հատուցումների գծով վճարած գումարով՝
- Դտ-305 ենթաբաժնի համապատասխան հաշիվ
- Կտ-3060
- Կարգավորման ծախսերի գծով վճարած գումարով՝
- Դտ- համապատասխան ծախսային հաշիվ
- Կտ-3060
- Վերջնահաշվարկի արդյունքում ճշգրտման գումարով՝
- Դտ-3060
- Կտ-6091
- Կամ
- Դտ-7091
- Կտ-3060
- Դրամական միջոցների վերադարձման դեպքում՝
- Դտ- 3060
- Կտ-Դրամական միջոցներ:

3061,3062,3063 հաշիվները նախատեսված են ուղիղ հատուցումների գծով ապահովադիրներին վճարվելիք գումարների հաշվառման համար:

- Ուղիղ հատուցումների գծով վճարվելիք գումարների չափով ձևակերպվում է.
- Դտ- 3064
- Կտ- 3061(3062, 3063)
- Վճարելիս.
- Դտ-3061(3062, 3063)
- Կտ- Դրամական միջոցներ:

**3064 «Ստացվելիք գումարներ ապահովագրական ընկերություններից ուղիղ հատուցումների գծով»** պասիվային կարգավորող հաշիվ է, դեբետագրվում է ապահովադիրներին ուղիղ հատուցումների գծով վճարումների և կարգավորման ծախսեր իրականացման համար և կրեդիտագրվում է ապահովագրական ընկերություններից հետ ստացման դեպքում, ինչպես նաև ճշգրտվում է վերջնահաշվարկի արդյունքում:

- Ուղիղ հատուցումների գծով վճարած գումարով և կարգավորման ծախսերի գծով՝
- Դտ-3064
- Կտ-3061(3062, 3063)

Վերջնահաշվարկի արդյունքում ճշգրտման գումարով՝  
Դտ-3064  
Կտ-6091  
Կամ  
Դտ-7091  
Կտ-3064  
Դրամական միջոցների հետ ստացման դեպքում՝  
Դտ-Դրամական միջոցներ,  
Կտ- 3064

### **Ենթաբաժին 307**

#### **«Կրած պահանջներ համաապահովագրության գծով»**

Այս ենթաբաժնում արտացոլվում են համաապահովագրության գծով կրած պահանջները:

Հաշվառումը կատարվում է նույն սկզբունքով, ինչ ուղղակի ապահովագրության գծով կրած պահանջների՝ Ենթաբաժին 305-ի դեպքում:

### **Ենթաբաժին 308**

#### **«Կրած պահանջներ վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով»**

Այն ենթաբաժնում արտացոլվում են վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով կրած պահանջները: Հաշիվների հաշվառումը կատարվում է նույն սկզբունքով, ինչ ուղղակի ապահովագրության գծով կրած պահանջների՝ Ենթաբաժին 305-ի դեպքում:

Ե. լրացնել **«Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի բաղադրիչներ»** վերնագրով 31-րդ բաժնով հետևյալ բովանդակությամբ.

**(Բաժին 30-ը խմբ. 27.12.22թ. թիվ 343-Ն)**

### **ԲԱԺԻՆ 31**

#### **«Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի բաղադրիչներ»**

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 310 «Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի բաղադրիչներ», 311 «Ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրեր, ապահովագրության պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքներ»,

**312 «Հայեցողական մասնակցության հատկանիշներով ներդրումային պայմանագրեր»:**

**Ենթաբաժին 310  
«Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի բաղադրիչներ»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերում պարունակվող ՖՀՄՍ 17-ի համաձայն առանձնացված ներդրումային բաղադրիչը հաշվառելու համար: Ընդ որում, ներդրումային բաղադրիչի հաշվառումը տարվում է ՖՀՄՍ 9-ի համաձայն:

**3100 «Ապահովագրության պայմանագրերում պարունակվող ներդրումային բաղադրիչի գծով վճարվելիք գումարներ ֆիզիկական անձ և անհատ ձեռնարկատեր ապահովադիրներին»** - այս հաշվում արտացոլվում է ՖՀՄՍ 17-ի համաձայն ապահովագրական պայմանագրերից առանձնացված ներդրումային բաղադրիչը՝ հետևյալ ձևակերպումներով.

Դտ- Դրամական միջոցներ

Կտ- 3100:

Ներդրումային բաղադրիչի մեծության ճշգրտման նպատակով 3100 հաշվում փոփոխությունները իրականացվում են թղթակցելով դրամական միջոցների հետ՝ համապատասխանաբար ներդրումային բաղադրիչի գծով պարտավորության ավելացման կամ նվազման դեպքում.

Դտ- Դրամական միջոցներ

Կտ- 3100

կամ

Դտ- 3100

Կտ- Դրամական միջոցներ:

Եթե ներդրումային բաղադրիչի մեծության գծով պարտավորությունը նվազում է ավելի մեծ չափով, քան 3100 հաշվում առկա մնացորդը, ապա դեբետագրվում է 3100 հաշվում մնացած ողջ գումարը, և տարբերության չափով դեբետագրվում է 1100 հաշիվը.

Դտ- 3100 հաշվում առկա ողջ մնացորդի չափով

Դտ- 1100 նվազեցվող գումարի և 3100 հաշվի մնացորդի տարբերության չափով

Կտ- Դրամական միջոցներ:

Ապահովագրական պայմանագրերում պարունակվող ներդրումային բաղադրիչի մեծության վերազնահատման դեպքում տրվում են հետևյալ ձևակերպումները.

Դտ- համապատասխան ծախսային հաշիվ

Կտ- 3100,

կամ

Դտ- 3100

Կտ- համապատասխան եկամտային հաշիվ՝

համապատասխանաբար ներդրումային բաղադրիչի իրական արժեքի ավելացման կամ նվազման դեպքում:

**3101-3103** հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 3100 հաշվի հաշվառումը:

### **Ենթաբաժին 311**

#### **«Ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրեր, ապահովագրության պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքներ»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են Ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերի և ապահովագրության պայմանագրերում ներառված ածանցյալ գործիքների հաշվառման համար՝ համաձայն ՖՀՄՍ 17-ի:

**3110 «Ֆիզիկական անձ և անհատ ձեռնարկատեր ապահովադիրների հետ կնքված** ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրեր» - այս հաշիվը նախատեսված է այն ապահովագրական պայմանագրերի համար, որոնք պարունակում են ուղղակի մասնակցության հատկանիշներ՝ համաձայն ՖՀՄՍ 17-ի:

Ապահովագրական պայմանագրերի վերագնահատման դեպքում տրվում են հետևյալ ձևակերպումները.

Դտ- համապատասխան ծախսային հաշիվ

Կտ- 3110,

կամ

Դտ- 3110

Կտ- համապատասխան եկամտային հաշիվ՝

համապատասխանաբար ապահովագրական պայմանագրի իրական արժեքի աճի կամ նվազման դեպքում:

**3111, 3112, 3116** հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 3110 հաշվի հաշվառումը:

**3113 «Ֆիզիկական անձ և անհատ ձեռնարկատեր ապահովադիրների հետ կնքված ապահովագրության պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքներ»** - այս հաշիվը նախատեսված է ապահովագրական պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքների առանձնացված հաշվառման համար՝ համաձայն ՖՀՄՍ 17-ի: Պարունակվող ածանցյալ գործիքները չափվում են համաձայն ՖՀՄՍ 9-ի:

3114, 3115, 3117 հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 3113 հաշվի հաշվառումը:

**3118 «Ապահովագրության պայմանագրերում պարունակվող առանձնացվելի ապրանքներ և ոչ ապահովագրական ծառայություններ»** հաշիվը նախատեսված է ապահովագրական պայմանագրերում պարունակվող առանձնացվելի ապրանքների և ոչ ապահովագրական ծառայությունների գծով վճարվելիք գումարների արտացոլման համար համաձայն ՖՀՄՍ 17-ի: Հաշիվների հաշվառումը տարվում է ՖՀՄՍ 15-ի 7-րդ պարագրաֆի համաձայն:

3119 հաշվի հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 3118 հաշվի հաշվառումը:

### **Ենթաբաժին 312**

#### **«Հայեցողական մասնակցության հատկանիշներով ներդրումային պայմանագրեր»**

Այս ենթաբաժնում հաշվառվում են հայեցողական մասնակցության հատկանիշներով ներդրումային պայմանագրերը: Հաշիվների հաշվառումը տարվում է ՖՀՄՍ 17-ի համաձայն:

**(Բաժին 31-ը լրաց. 27.12.22թ. թիվ 343-Ն)**

### **ԲԱԺԻՆ 32**

#### **«Ստացված ընթացիկ փոխառություններ և վարկեր»**

Այս բաժինը ներառում է 320 «Բանկերից ստացված ընթացիկ վարկեր և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր», 321 «Ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններից ներգրավված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր», 322 «Ներդրումային ընկերություններից ներգրավված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր», 323 «Վարկային կազմակերպություններից ստացված ընթացիկ վարկեր, ներգրավված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր», 324 «Այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր», 325-326 «Այլ անձանցից ներգրավված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր» ենթաբաժինները:

Բաժնում հաշվառվող ակտիվների հաշվապահական հաշվառումը կատարվում է ստորև ներկայացված սկզբունքների համաձայն, եթե այլ բան նախատեսված չէ ՖՀՄՍ 9 ստանդարտով:

### **Ենթաբաժին 320**

#### **«Բանկերից ստացված ընթացիկ վարկեր և նրանց հետ կնքված**

## **ռեպո համաձայնագրեր»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են բանկերից ստացված ընթացիկ վարկերի հաշվառման համար: Հաշիվները պասիվային են, կրեդիտագրվում են ստացված վարկերի դեպքում, դեբետագրվում են դրանց մարման, վճարման դեպքում:

**3200 «Բանկերից ստացված ընթացիկ վարկեր»**- այս հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերության կողմից բանկերից ստացված ընթացիկ վարկերի հաշվառման համար:

Վարկերի ստացման դեպքում ձևակերպվում է.

Դտ- Դրամական միջոցներ

ԿՏ- 3200:

Սկզբնական ճանաչումից հետո վարկերը հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ հաշվարկված ծախսի չափով՝ տալով հետևյալ հաշվապահական ձևակերպումները.

Դտ- համապատասխան ծախսային հաշիվ,

Կտ- 3200:

**3201 «Բանկերից ստացված ընթացիկ վարկերի գծով անվանական տոկոսներ, տույժեր և տուգանքներ»**- այս հաշիվը նախատեսված է ստացված ընթացիկ վարկերի նկատմամբ անվանական տոկոսադրույքով հաշվարկված տոկոսները, տույժերը և տուգանքները արտացոլելու համար: Հաշվարկված անվանական տոկոսների չափով տրվում են հետևյալ ձևակերպումները.

Դտ- 3200

Կտ- 3201

Տույժերի և տուգանքների չափով տրվում են հետևյալ ձևակերպումները.

Դտ- համապատասխան ծախսային հաշիվ

Կտ- 3201:

**3202 «Բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրեր»**- այս հաշիվը նախատեսված է բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրերի հաշվառման համար:

Հաշվապահական ձևակերպումը տրվում է հետևյալ կերպ.

Դտ- Դրամական միջոցներ

Կտ- 3202:

Սկզբնական ճանաչումից հետո ռեպո համաձայնագրերը հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ հաշվարկված ծախսի չափով տալով հետևյալ հաշվապահական ձևակերպումները.

Դտ- համապատասխան ծախսային հաշիվ  
Կտ- 3202

**3203 «Բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրերի գծով անվանական տոկոսներ, տույժեր և տուգանքներ»** - այս հաշիվը նախատեսված է բանկերից գնված ռեպո համաձայնագրերի գծով անվանական տոկոսադրույքով հաշվարկված տոկոսները, տույժերը և տուգանքները արտացոլելու համար:

Հաշվարկված անվանական տոկոսների չափով տրվում են հետևյալ ձևակերպումները.

Դտ- 3202

Կտ- 3203

Տույժերի և տուգանքների չափով տրվում են հետևյալ ձևակերպումները.

Դտ-համապատասխան ծախսային հաշիվ

Կտ- 3203:

Այս բաժնի մյուս ենթաբաժնի հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 320 ենթաբաժնի հաշվառումը:

### **ԲԱԺԻՆ 33**

#### **«Ընթացիկ պարտավորություններ ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ»**

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 330 «Ընթացիկ պարտավորություններ ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ» և 331 «Ընթացիկ վարկեր գանձապետարանից»:

Բաժնում հաշվառվող ակտիվների հաշվապահական հաշվառումը կատարվում է ստորև ներկայացված սկզբունքների համաձայն, եթե այլ բան նախատեսված չէ ՖՀՄՍ 9 ստանդարտով:

#### **Ենթաբաժին 330**

#### **«Ընթացիկ պարտավորություններ ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, այդ թվում՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության նկատմամբ ապահովագրական ընկերության ընթացիկ պարտավորությունների հաշվառման համար: Պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով: Հաշվապահական ձևակերպումները տրվում են նույն սկզբունքով, 320 ենթաբաժնի հաշիվների դեպքում է:



Բաժնի մյուս ենթաբաժնի հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 330 ենթաբաժնի դեպքում:

## **ԲԱԺԻՆ 34**

### **«Առևտրային նպատակներով պահվող պարտավորություններ»**

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 340 «Աձանցյալ գործիքներ», 341 «Ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթեր», 349 «Առևտրային նպատակներով պահվող այլ պարտավորություններ»:

Բաժնում հաշվառվող ակտիվների հաշվապահական հաշվառումը կատարվում է ստորև ներկայացված սկզբունքների համաձայն, եթե այլ բան նախատեսված չէ ՖՀՄՍ 9 ստանդարտով:

#### **Ենթաբաժին 340**

##### **«Աձանցյալ գործիքներ»**

Այս ենթաբաժնում հաշվառվում են ապահովագրական ընկերության կողմից ապահովագրության պայմանագրերից բխող ռիսկերը ծածկելու համար ձեռք բերված աձանցյալ գործիքները: Հաշվապահական հաշվառումը կատարվում է համաձայն ՖՀՄՍ 9-ի:

#### **Ենթաբաժին 341**

##### **«Ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթեր»**

Այս ենթաբաժնում հաշվառվում է ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթերի վաճառքի արդյունքում ձևավորված պարտավորությունը՝ հետևյալ հաշվապահական ձևակերպումներով.

Դտ- դրամական միջոց,

Կտ- 341 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթի գծով պարտավորությունները վերագնահատվում են իրական արժեքով՝ թղթակցելով համապատասխան եկամտային կամ ծախսային հաշիվների հետ:

## **ԲԱԺԻՆ 35**

## «Ապահովագրական ընկերության կողմից թողարկված ընթացիկ արժեթղթեր»

Բաժնում հաշվառվող ակտիվների հաշվապահական հաշվառումը կատարվում է ստորև ներկայացված սկզբունքների համաձայն, եթե այլ բան նախատեսված չէ ՖՀՄՍ 9 ստանդարտով:

### Ենթաբաժին 350 «Թողարկված ընթացիկ արժեթղթեր»

**3500 «Թողարկված առանց տոկոսի արժեթղթեր»**-այս հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերության կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթերի հաշվառման համար:

Ապահովագրական ընկերության կողմից թողարկված զեղչատոկոսային արժեթուղթը հաշվեկշռում գրանցվում է իրացման արժեքով, հետևյալ ձևակերպմամբ՝

Դտ- Դրամական միջոցներ

Կտ- 3500 «Թողարկված առանց տոկոսի արժեթղթեր»:

Սկզբնական ճանաչումից հետո թողարկված արժեթղթերը հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված ծախսի չափով տալով հետևյալ հաշվապահական ձևակերպումները.

Դտ- համապատասխան ծախսային հաշիվ,

Կտ- 3502:

Թողարկված արժեթղթերի մարման դեպքում՝ մարման չափով տրվում են հետևյալ ձևակերպումները.

Դտ- 3500 «Թողարկված առանց տոկոսի արժեթղթեր»

Կտ- Դրամական միջոցներ:

**3501 «Թողարկված տոկոսային արժեթղթեր»**- այս հաշիվը նախատեսված է թողարկված տոկոսային եկամուտ ապահովող արժեթղթերի հաշվառման համար:

Թողարկված տոկոսային արժեթղթերը հաշվեկշռում գրանցվում են իրենց իրացման արժեքով՝ կատարելով հետևյալ հաշվապահական ձևակերպումները.

Դտ- Դրամական միջոցներ

Կտ- 3501 «Թողարկված տոկոսային արժեթղթեր»:

Սկզբնական ճանաչումից հետո ռեպո համաձայնագրերը հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ հաշվարկված ծախսի չափով՝ տալով հետևյալ հաշվապահական ձևակերպումները.

Դտ- համապատասխան ծախսային հաշիվ,

Կտ- 3501:

Արժեթղթերի մարման դեպքում՝ մարման չափով տրվում են հետևյալ ձևակերպումները՝

Դտ- 3501 «Թողարկված տոկոսային արժեթղթեր»,

Կտ- Դրամական միջոցներ:

**3502 «Թողարկված տոկոսային արժեթղթերի գծով անվանական տոկոսներ»-** այս հաշիվը նախատեսված է թողարկված տոկոսային եկամուտ ապահովող արժեթղթերի գծով անվանական տոկոսադրույքով հաշվարկած վճարվելիք գումարների արտացոլման համար. հաշվարկված վճարվելիք գումարներ չափով տրվում են հետևյալ ձևակերպումները.

Դտ- 3501

Կտ- 3502

Վճարվելիք գումարների գծով փաստացի վճարումների հաշվապահական ձևակերպումները հետևյալն են.

Դտ- 3502

Կտ- դրամական միջոց:

## **ԲԱԺԻՆ 36**

**(36-րդ բաժինը ուժը կորցրել է 2712.22թ. թիվ 243-Ն)**

## **ԲԱԺԻՆ 37**

**«Այլ վճարվելիք գումարներ»**

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 370 «Վճարման ենթակա շահաբաժիններ», 371 «Կրեդիտորական պարտքեր բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով», 372 «Ներքին և արտաքին կրեդիտորական պարտքեր», 373 «Ընթացիկ պարտավորություններ հետաձգված հարկերի գծով», 374 «Եկամուտներին վերաբերող շնորհներ», 375 «Պահուստներ», 376 «Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ», 377 «Այլ ընթացիկ պարտավորություններ»:

### **Ենթաբաժին 370**

**«Վճարման ենթակա շահաբաժիններ»**

Այս ենթաբաժինը նախատեսված է ապահովագրական ընկերության կողմից թողարկված արտոնյալ և հասարակ բաժնետոմսերի դիմաց վճարվելիք շահաբաժինների հաշվառման համար, որոնք հաշվառվում են սկզբնական արժեքով՝ համապատասխան ՄՖՀՍ 39-ի:

Շահաբաժիններ հայտարարելիս ապահովագրական ընկերությունը ձևակերպում է՝

Դտ- «Չբաշխված շահույթ» ենթաբաժնի համապատասխան հաշիվներ

Կտ- 370 «Վճարման ենթակա շահաբաժիններ» ենթաբաժնի համապատասխան հաշիվներ;  
Շահաբաժինները վճարելիս ձևակերպում է՝  
Դտ- 370 «Վճարման ենթական շահաբաժիններ» ենթաբաժնի համապատասխան հաշիվներ  
Կտ- Դրամական միջոցներ:

### **Ենթաբաժին 371**

#### **«Կրեդիտորական պարտքեր բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով»**

**3710 «Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով»**- այս հաշիվը նախատեսված է հաշվարկված շահութահարկի գծով ապահովագրական ընկերության պարտավորությունների հաշվառման համար:

Հաշիվը կրեդիտագրվում է հաշվարկված շահութահարկի գումարի չափով՝

Դտ -համապատասխան ծախսային հաշիվ,

Կտ- 3710 «Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով»:

Հաշիվը դեբետագրվում է շահութահարկի գծով պարտավորությունները դուրս գրելիս՝ թղթակցելով

Դտ-3710 «Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով»

Կտ- 1720 «Կանխավճարներ, գերավճարներ շահութահարկի գծով»:

**3711 «Կրեդիտորական պարտքեր ավելացված արժեքի հարկի գծով»**- այս հաշիվը նախատեսված է հաշվարկված ավելացված արժեքի հարկի գծով ապահովագրական ընկերության պարտավորության հաշվառման համար: «Կրեդիտորներ ավելացված արժեքի հարկի գծով» հաշիվը թղթակցում է այն ակտիվային հաշիվների հետ, որոնց գծով հաշվարկվել է հարկը:

Հաշիվը դեբետագրվում է ավելացված արժեքի հարկի գծով պարտավորությունները դուրս գրելիս՝ թղթակցելով 1721 «Կանխավճարներ, գերավճարներ ավելացված արժեքի հարկի գծով» հաշվի հետ՝

Դտ- 3711 «Կրեդիտորական պարտքեր ավելացված արժեքի հարկի գծով»

Կտ- 1721 «Կանխավճարներ, գերավճարներ ավելացված արժեքի հարկի գծով»:

**3712 «Կրեդիտորական պարտքեր այլ հարկերի և տուրքերի գծով»**- այս հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերության կողմից բյուջե վճարվելիք այլ հարկերի, տուրքերի, ինչպես նաև ապահովագրական ընկերության՝ որպես հարկային գործակալ, իր հաճախորդներին վճարված եկամուտներից պահված առանձին հարկատեսակների հաշվառման համար:

Եկամտահարկի գծով ձևակերպվում է՝

Դտ- համապատասխան ծախսային հաշիվ,

Կտ- 3712 «Կրեդիտորական պարտքեր այլ հարկերի և տուրքերի գծով»:

**3713 «Կրեդիտորական պարտքեր սոցիալական ապահովագրության վճարումների գծով»**- այս հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերության աշխատողների աշխատավարձից և ապահովագրական ընկերության միջոցներից պարտադիր սոցիալական ապահովագրության գծով վճարվելիք գումարների հաշվառման համար:

Վճարվելիք գումարի չափով տրվում է հետևյալ հաշվապահական ձևակերպումը՝

Դտ- 7403 «Հատկացումներ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով»

Կտ- 3713:

Պարտավորությունները մարելիս՝

Դտ- 3713

Կտ- Դրամական միջոցներ:

### **Ենթաբաժին 372**

#### **«Ներքին և արտաքին կրեդիտորական պարտքեր»**

**3720 «Աշխատակիցներին վճարվելիք աշխատավարձ և այլ վճարներ»**- հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերության աշխատողներին վճարվելիք աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների հաշվառման համար:

Վճարվելիք աշխատավարձի կամ դրան հավասարեցված այլ վճարների գումարի չափով կատարվում է հետևյալ ձևակերպումը՝

Դտ- համապատասխան ծախսային հաշիվ,

Կտ- 3720:

Վճարում կատարելիս՝

Դտ-3720

Կտ-Դրամական միջոցներ:

**3721 «Այլ ներքին կրեդիտորական պարտքեր»**- այս հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերության աշխատողների նկատմամբ այլ պարտավորությունների հաշվառման համար:

**3722 «Այլ արտաքին կրեդիտորական պարտքեր»**- այս հաշիվը նախատեսված է ապրանքների կամ ծառայությունների դիմաց վճարվելիք գումարների հաշվառման համար:

**3723 «Կրեդիտորական պարտքեր կանոնադրական կապիտալի համալրման գծով»**- հաշիվն օգտագործվում է նոր ստեղծվող ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալի ձևավորման և գործող ապահովագրական ընկերությունների կանոնադրական կապիտալի համալրման նպատակով՝ մինչև ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով կանոնադրական կապիտալի գրանցումը, որից հետո այս հաշիվը փակվում է, իսկ դրանում հաշվառված միջոցներն օգտագործվում են ապահովագրական ընկերության հայեցողությամբ:

Հաշիվը դեբետագրվում է կանոնադրական կապիտալի ձևավորման և համալրման դեպքում՝

Դտ- հաշիվներ բանկերում

Կտ- 3723:

Կանոնադրական կապիտալի ձևավորումից կամ համալրումից հետո այս հաշիվը փակվում է:

**3724 «Ֆինանսական հաշտարարի գրասենյակին կատարվող վճարումներ»** - այս հաշիվը նախատեսված է Ֆինանսական հաշտարարի գրասենյակին կատարվող վճարումների գծով կրեդիտորական պարտքերի արտացոլման համար: Կրեդիտորական պարտքի ձևավորման ժամանակ տրվում են հետևյալ ձևակերպումները.

Դտ- համապատասխան ծախսային հաշիվ,

Կտ- 3724

Վճարում կատարելիս՝

Դտ- 3724

Կտ-դրամական միջոցներ:

**3725 «Ավտոապահովագրողների բյուրոյին կատարվելիք վճարումներ»**- այս հաշիվը նախատեսված է Ավտոապահովագրողների բյուրոյին կատարվելիք վճարումների գծով կրեդիտորական պարտքերի արտացոլման համար: Կրեդիտորական պարտքի ձևավորման ժամանակ տրվում են հետևյալ ձևակերպումները.

Դտ- համապատասխան ծախսային հաշիվ,

Կտ-3725

Վճարում կատարելիս՝

Դտ- 3725

Կտ- Դրամական միջոցներ:

### **Ենթաբաժին 373**

#### **«Ընթացիկ պարտավորություններ հետաձգված հարկերի գծով»**

**3730 «Ընթացիկ պարտավորություններ հետաձգված հարկերի գծով»**- այս հաշիվը նախատեսված է հաշվարկված հարկերի գծով ընթացիկ

պարտավորությունների հաշվառման համար, որոնց վճարման ժամկետը հետաձգվել է մինչև դրանց հետ կապված իրացումից հասույթի ստացումը:

Հաշիվը պասիվային է, կրեդիտում արտացոլվում են հետաձգված հարկերի գծով առաջացած ընթացիկ պարտավորությունների գումարները, իսկ դեբետում՝ դրանց մարման գումարը:

Շահութահարկի գումարն արտացոլելիս.

Դտ- համապատասխան ծախսային հաշիվ,

Կտ-3730:

### **Ենթաբաժին 374 «Եկամուտներին վերաբերող շնորհներ»**

**3740 «Եկամուտներին վերաբերող շնորհներ»**- այս հաշիվը նախատեսված է եկամուտներին վերաբերող շնորհների հաշվառման համար: Եկամուտներին վերաբերող շնորհների հաշվառման մոտեցումները նկարագրված են ՀՀՄՍ 20 ստանդարտում:

Եկամուտներին վերաբերող շնորհները ստանալիս.

Դտ- համապատասխան ակտիվային հաշիվներ

Կտ- 3740:

Եկամուտներին վերաբերող շնորհների վերագրումը եկամուտներին.

Դտ-3740

Կտ-համապատասխան եկամտային հաշիվ:

### **Ենթաբաժին 375 «Պահուստներ»**

**3750 «Անբարենպաստ պայմանագրերի գծով ընթացիկ պահուստներ»**- այս հաշիվը նախատեսված է այն պահուստների հաշվառման համար, որոնք կապված են ընկերության կողմից կնքված անբարենպաստ պայմանագրերի հետ, մասնավորապես, այդ պայմանագրերով նախատեսված պարտավորությունները կատարելու անխուսափելի ծախսումները գերազանցում են այդ պայմանագրերից ակնկալվող ստացվելիք օգուտները: Նմանատիպ պայմանագրերի հաշվառումը տարվում է համաձայն ՀՀՄՍ 37-ի:

Պահուստների ճանաչման ժամանակ ձևակերպվում է.

Դտ-համապատասխան ծախսային հաշիվ,

Կտ-3750:

### **Ենթաբաժին 376**

## «Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրության գծով, ինչպես նաև ապագա ժամանակաշրջանի այլ եկամուտների հաշվառման համար: Հաշիվները պասիվային են, կրեդիտում արտացոլվում են ապագա ժամանակաշրջանի եկամուտները՝ թղթակցելով դրամական միջոցների հաշիվների հետ, իսկ դեբետում՝ ապագա ժամանակաշրջանի եկամուտների ճանաչումը որպես եկամուտ՝ թղթակցելով համապատասխան եկամտային հաշիվների հետ:

### «Ենթաբաժին 377

#### «Այլ ընթացիկ պարտավորություններ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ստացված կանխավճարների, կարճաժամկետ կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով վճարվելիք գումարների, վճարվելիք տույժերի, տուգանքների և այլ ընթացիկ այն պարտավորությունների հաշվառման համար, որոնց համար առանձին հաշիվներ նախատեսված չեն: Հաշիվները պասիվային են, կրեդիտում արտացոլվում է պարտավորությունների աճը, իսկ դեբետում՝ դրանց մարումը:

**3770 «Կարճաժամկետ վարձակալության կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով վճարվելիք գումարներ»** - հաշիվը նախատեսված է Կարճաժամկետ վարձակալության կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով վճարվելիք գումարների հաշվառման համար:

Հաշիվը կրեդիտագրվում է վերը նշված միջոցների գծով հաշվեգրվող վարձակալության վճարումների չափով՝ վարձակալության ժամանակահատվածում համաչափ բաշխվածության կամ այլ համակարգված սկզբունքի հիման վրա՝ համաձայն ՖՀՄՍ 16-ի.

Դտ - 7391

Կտ - 3770:



## **ԴԱՍ 4. Ոչ ընթացիկ պարտավորություններ**

### **ԲԱԺԻՆ 40**

#### **«Ստացված ոչ ընթացիկ փոխառություններ և վարկեր»**

Այս բաժինը ներառում է 400 «Բանկերից ստացված ոչ ընթացիկ վարկեր», 401 «Ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններից ներգրավված ոչ ընթացիկ փոխառություններ», 402 «Ներդրումային ընկերություններից ներգրավված ոչ ընթացիկ փոխառություններ», 403 «Վարկային կազմակերպություններից ստացված ոչ ընթացիկ վարկեր և ներգրավված ոչ ընթացիկ փոխառություններ», 404 «Այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ոչ ընթացիկ փոխառություններ և ստացված ոչ ընթացիկ վարկեր», 405 «Այլ անձանցից ներգրավված ոչ ընթացիկ փոխառություններ»:

Այս բաժնի հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ Բաժին 32-ում ներառված հաշիվների հաշվառումը:

### **ԲԱԺԻՆ 41**

#### **«Ոչ ընթացիկ պարտավորություններ ՀՀ կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների և սոցիալական ապահովագրության հիմնադրամի նկատմամբ»**

Այս բաժնի հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 33 բաժնի հաշվառումը:

### **ԲԱԺԻՆ 42**

#### **«Ապահովագրական ընկերության կողմից թողարկված ոչ ընթացիկ արժեթղթեր»**

Այս բաժնի հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 35 բաժնի հաշիվների հաշվառումը:

### **ԲԱԺԻՆ 43**

#### **«Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ»**

Այս բաժնում ներառված են հետևյալ ենթաբաժինները., 432 «Ակտիվներին վերաբերող շնորհներ», 433 «Հետաձգված հարկային պարտավորություններ», 434 «Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ»:

**Ենթաբաժին 430**  
**«Վարձակալության գծով վճարվելիք գումարներ»**

Ենթաբաժին 430-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են այլ անձանց վարձակալության գծով վճարվելիք գումարների հաշվառման համար: Հաշվառումը տարվում է ՖՀՄՍ 16 «Վարձակալություն» ստանդարտի համաձայն:

Հաշիվը կրեդիտագրվում է հիմնական միջոցների վարձակալության սկզբնական ճանաչման ժամանակ՝ վարձակալության գծով վճարման ենթակա գումարների ներկա արժեքի չափով՝ համաձայն ՖՀՄՍ 16-ի.

Դտ - 2006

Կտ - 4301:

Հաշիվը կրեդիտագրվում է վարձակալության գծով վճարվելիք գումարների հետագա հաշվառման շրջանակներում հաշվեգրվող վճարումների չափով՝

Դտ - 7390

Կտ - 4301:

Հաշիվը կարող է կրեդիտագրվել նաև պարտավորության դրական վերաչափման դեպքում, ձևափոխման արդյունքում առաջացող ավելացումների դեպքերում, որոնք չեն դիտվել առանձին վարձակալություն, ինչպես նաև ձևափոխման արդյունքում առաջացող այլ ճշգրտումների դեպքում.

Դտ - 2006

Կտ - 4301:

Հաշիվը դեբետագրվում է վարձավճարները վճարելիս՝

Դտ - 4301

Կտ - Դրամական միջոցներ:

Հաշիվը դեբետագրվում է նաև պարտավորության բացասական վերաչափման, ինչպես նաև ձևափոխման արդյունքում առաջացող ճշգրտումների դեպքում.

Դտ - 4301

Կտ - 2006:

Այն դեպքերում, երբ բացասական վերաչափման կամ վարձակալության շրջանակի նվազման արդյունքում օգտագործման իրավունքի ձևով ակտիվների գումարը հավասարվում է զրոյի, իսկ պարտավորության հաշվին առկա է նվազման ենթակա մնացորդ, ապա այն նվազում է ուղղակիորեն վերագրվելով եկամուտներին/ծախսերին.

Դտ - 4301

Կտ - 6890:

**Ենթաբաժին 432**  
**«Ակտիվներին վերաբերող շնորհներ»**

**4320 «Ակտիվներին վերաբերող շնորհներ»-** Այս հաշիվը նախատեսված է որպես շնորհ ստացված ոչ ընթացիկ ակտիվների, ինչպես նաև դրանց գնման, կառուցման կամ այլ կերպ ձեռքբերման նպատակով ստացված ակտիվների հաշվառման համար: Ակտիվներին վերաբերող շնորհների հաշվապահական հաշվառման մոտեցումները նկարագրված են ՀՀՄՍ 20 «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում ստանդարտում»:

Շնորհների ստացման դեպքում ձևակերպվում է.

Դտ-Ակտիվներ

Կտ 4320:

Շնորհների վերադարձում դեռևս չմարված մնացորդի հաշվին.

Դտ-4320

Կտ-Ակտիվներ:

**Ենթաբաժին 433**  
**«Հետաձգված հարկային պարտավորություններ»**

**4330 «Հետաձգված հարկային պարտավորություններ»-** այս հաշիվը նախատեսված է հարկվող ժամանակավոր տարբերությունների հետևանքով առաջացած շահութահարկի գծով հետաձգված հարկային պարտավորությունների հաշվառման համար: Հաշիվը պասիվային է, կրեդիտում արտացոլվում են շահութահարկի գծով առաջացած հետաձգված հարկային պարտավորությունների գումարները, իսկ դեբետում՝ դրանց մարումները:

**Ենթաբաժին 434**  
**«Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերության այլ ոչ ընթացիկ պարտավորությունների հաշվառման համար, որոնց համար առանձին հաշիվներ նախատեսված չեն: Հաշիվը պասիվային է, կրեդիտում արտացոլվում է այդ պարտավորությունների աճը, իսկ դեբետում՝ դրանց մարումը, դուրսգրումը:

**ԴԱՍ 5. ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ**

## **ԲԱԺԻՆ 50**

### **«Փաստացի համալրված կանոնադրական կապիտալ»**

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 500 «Կանոնադրական կապիտալ», 501 «Չվճարված կապիտալ», 502 «Հետգնված կապիտալ»:

#### **Ենթաբաժին 500 «Կանոնադրական կապիտալ»**

**5001 «Արտոնյալ բաժնետոմսեր-անվանական արժեք»-** հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերության կողմից թողարկված արտոնյալ բաժնետոմսերի հաշվառման համար: Հաշվառումը տարվում է բաժնետոմսերի անվանական արժեքով: Հաշիվը կրեդիտագրվում է արտոնյալ բաժնետոմսերի (այդ թվում՝ նաև լրացուցիչ) թողարկման դեպքում:

**5002 «Արտոնյալ բաժնետոմսեր-էմիսիոն եկամուտ»-** այս հաշվում հաշվառվում է ներդրողների կողմից արտոնյալ բաժնետոմսերի ձեռքբերման համար վճարված գնի և անվանական արժեքի միջև եղած դրական տարբերությունը:

**5003 «Արտոնյալ բաժնետոմսեր-զեղչ»-** այս հաշվում հաշվառվում է ներդրողների կողմից արտոնյալ բաժնետոմսերի ձեռքբերման համար վճարված գնի և անվանական արժեքի միջև եղած բացասական տարբերությունը:

**5004 «Սովորական բաժնետոմսեր-անվանական արժեք»-** հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերության կողմից թողարկված սովորական բաժնետոմսերի հաշվառման համար: Հաշվառումը տարվում է բաժնետոմսերի անվանական արժեքով: Հաշիվը կրեդիտագրվում է սովորական բաժնետոմսերի (այդ թվում նաև՝ լրացուցիչ) թողարկման դեպքում:

**5005 «Սովորական բաժնետոմսեր-էմիսիոն եկամուտ»-** այս հաշվում հաշվառվում է ներդրողների կողմից սովորական բաժնետոմսերի ձեռքբերման համար վճարված գնի և անվանական արժեքի միջև եղած դրական տարբերությունը:

**5006 «Սովորական բաժնետոմսեր-զեղչ»-** այս հաշվում հաշվառվում է ներդրողների կողմից սովորական բաժնետոմսերի ձեռքբերման համար վճարված գնի և անվանական արժեքի միջև եղած բացասական տարբերությունը:

**5007 «Բաժնեմասեր»-** այս հաշիվում հաշվառվում է ՍՊԸ ապահովագրական ընկերությունների կանոնադրական կապիտալի միջոցների հաշվառման համար:

#### **Ենթաբաժին 501 «Չվճարված կապիտալ»**

**501 «Չվճարված կապիտալ»-** ենթաբաժինը նախատեսված է ապահովագրական ընկերության չվճարված կապիտալի առկայության և շարժի

վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Հաշիվներն ակտիվապասիվային են, կարգավորող: Այս ենթաբաժինը բաղկացած է 5010 «Թողարկված և չտեղաբաշխված կապիտալ» և 5011 «Տեղաբաշխված և չվճարված կապիտալ» հաշիվներից: Հաշիվների դեբետում արտացոլվում են բաժնետիրական ընկերությունների կողմից թողարկված, բայց չտեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքը, ինչպես նաև մասնակիցների (հիմնադիրների) պարտքը ապահովագրական ընկերությունների կապիտալում ներդրումների գծով, իսկ կրեդիտում՝ այդ պարտքի մարումը, չմարված պարտքերի կամ թողարկված, բայց չտեղաբաշխված բաժնետոմսերի հաշվին կապիտալի նվազեցումը:

## **Ենթաբաժին 502**

### **«Հետգնված կապիտալ»**

Այս ենթաբաժինը նախատեսված է ընկերության կողմից հետգնված սեփական բաժնետոմսերի հաշվառման համար: Հաշիվներն ակտիվապասիվային են. դեբետում արտացոլվում է մասնակիցներից հետ գնված բաժնետոմսերի արժեքը, իսկ կրեդիտում՝ դրանց մարումը և վերավաճառքը:

## **ԲԱԺԻՆ 51**

### **«Պահուստներ»**

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինը. 510 «Գլխավոր պահուստ»:  
Բաժնում հաշվառվող ակտիվների հաշվապահական հաշվառումը կատարվում է ստորև ներկայացված սկզբունքների համաձայն, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀՄՍ-ներով:

## **Ենթաբաժին 510**

### **«Գլխավոր պահուստ»**

**5100 «Գլխավոր պահուստ»**- այս հաշվում հաշվառվում է այն պահուստը, որն ստեղծվում է ապահովագրական ընկերության շահույթից՝ չնախատեսված ծախսերի փոխհատուցման նպատակով: Պահուստն օգտագործվում է համաձայն ՀՀ կենտրոնական բանկի և ապահովագրական ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգերի:

Գլխավոր պահուստին կատարվող հատկացումների գումարներով.

Դտ-5301 «Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ կամ վնաս»

Կտ-5100 «Գլխավոր պահուստ»:

Վնասների ծածկման նպատակով պահուստային կապիտալի օգտագործում.  
Դտ-5100 «Գլխավոր պահուստ»  
Կտ-5301 «Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ կամ վնաս»:

Շահաբաժինների վճարման նպատակով պահուստային կապիտալի օգտագործում.  
Դտ- 5100 «Գլխավոր պահուստ»  
Կտ- 370 ենթաբաժնի համապատասխան հաշիվներ:

Կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով պահուստային կապիտալի օգտագործում.  
Դտ-5100 «Գլխավոր պահուստ»  
Կտ-500 «Կանոնադրական կապիտալ» ենթաբաժնի համապատասխան հաշիվներ:

## **ԲԱԺԻՆ 52**

### **«Միջանկյալ շահաբաժիններ»**

Այս բաժինը ներառում է 520 «Միջանկյալ շահաբաժիններ» ենթաբաժինը:

**5200 «Միջանկյալ շահաբաժիններ»**- այս հաշվի դեբետում արտացոլվում է հայտարարված միջանկյալ շահաբաժինների գումարը, իսկ կրեդիտում՝ հաշվետու տարվա արդյունքներով հայտարարված շահաբաժինների մարումը միջանկյալ շահաբաժինների հաշվին:

## **ԲԱԺԻՆ 53**

### **«Զբաշխված շահույթ»**

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 530 «Զբաշխված շահույթ» և 531 «Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթի ճշգրտում»:

**5300 «Ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ կամ վնաս»**- այս հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերությունների ընթացիկ տարվա գործունեության ֆինանսական արդյունքի (շահույթի կամ վնասի) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Յուրաքանչյուր նոր ֆինանսական տարվա սկզբին այս հաշվի մնացորդը (նախորդ տարվա զուտ շահույթը/զուտ վնասը) տեղափոխվում է 5301 «Նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ կամ վնաս» հաշվին:

**5301 «Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ կամ վնաս»**- այս հաշվում հաշվառվում է նախորդ ֆինանսական տարիների զուտ շահույթը կամ վնասը, որը մնացել է գլխավոր պահուստին հատկացումներ կատարելուց և շահաբաժինները վճարելուց հետո:

## Ենթաբաժին 531

### «Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթի ճշգրտում»

Այս ենթաբաժինը նախատեսված է նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող գործառնությունների գծով հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերված էական սխալների ուղղումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքում առաջացած ճշգրտումների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար (եթե ապահովագրական ընկերությունն ընտրել է այնպիսի քաղաքականություն, ըստ որի՝ էական սխալների ուղղումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքները ճշգրտում են չբաշխված շահույթի սկզբնական մնացորդը): Նախորդ ժամանակաշրջանների ֆինանսական արդյունքների ճշգրտման մոտեցումները նկարագրված են ՀՀՄՍ 8 «Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ կամ վնաս, էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ» ստանդարտում:

## ԴԱՍ 5.1 ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵԿԱՄՈՒՏ

### ԲԱԺԻՆ 54 «Այլ համապարփակ եկամուտ»

Այս բաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերությունների այլ համապարփակ եկամուտը հաշվառելու համար:

**5400 «Հիմնական միջոցների վերազնահատումից փոփոխություններ»**- այս հաշվում հաշվառվում է հիմնական միջոցների պարբերաբար վերազնահատումից առաջացած չիրացված շահույթը՝ հաշվեկշռային արժեքը գերազանցող գումարի չափով: Հաշվառումը տարվում է ՀՀՄՍ 16-ի համաձայն, ընդ որում, որևէ հիմնական միջոցի որևէ տեսակի վերազնահատման դեպքում վերազնահատվում են տվյալ դասի բոլոր հիմնական միջոցները: Վերազնահատումը կատարվում է ապահովագրական ընկերությունների կողմից և հաստատվում անկախ գնահատող կազմակերպության կողմից: Վերազնահատման արդյունքում հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի նվազումը դեբետագրվում է համապատասխան ծախսային հաշվին: Եթե նախկինում այդ հիմնական միջոցը վերազնահատվել է, և արդյունքը կրեդիտագրվել է 5400 «Հիմնական միջոցների վերազնահատումից փոփոխություններ» հաշվին, ապա նվազման գումարը դուրս է գրվում այդ հաշվից: Վերազնահատումից հետո ամորտիզացիոն ծախսերը եկամուտների և ծախսերի հաշվետվությունում ավելի մեծ լինելու դեպքում ամորտիզացիոն ծախսերի ավելացած գումարը դեբետագրվում է այս հաշվից: Հիմնական միջոցների իրացման

դեպքում այս հաշվի մնացորդները ճանաչվում են որպես իրացված եկամուտ՝ թղթակցելով 683 ենթաբաժնի համապատասխան հաշիվների հետ:

**5401«Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից փոփոխություններ»-** այս հաշվում հաշվառվում է ապահովագրական ընկերության ոչ նյութական ակտիվների վերագնահատման արդյունքը: Վերագնահատման հաշվառումը ներկայացված է ՀՀՄՍ 38 «Ոչ նյութական ակտիվներ» ստանդարտում:

**5402«Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերաչափումից առաջացող օգուտներ և վնասներ»-** այս հաշվում հաշվառվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից առաջացող օգուտները և վնասները: Այս հաշվի մնացորդը ճանաչվում է որպես իրացված եկամուտ կամ վնաս ակտիվների օտարման կամ վերադասակարգման դեպքում:

ա) դրական մնացորդի դեպքում հետևյալ ձևակերպմամբ.

Դտ- 5402

Կտ- 683 ենթաբաժնի համապատասխան հաշիվ,

բ) բացասական մնացորդի դեպքում հետևյալ ձևակերպմամբ.

Դտ- 763 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ- 5402:

**5403 «Դրամական միջոցների հոսքերի հեջավորման գործիքների գծով օգուտների և վնասների արդյունավետ մաս»-** այս հաշիվը նախատեսված է դրամական հոսքերի հեջավորման ածանցյալ գործիքներից վերագնահատման արդյունքները հաշվառելու համար: Հաշվառումը տարվում է ՖՀՄՍ 9-ի համաձայն:

**5404 «Օտարերկրյա ստորաբաժանման ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկման արդյունքում առաջացող օգուտներ և վնասներ»-** այս հաշվում հաշվառվում է ապահովագրական ընկերության և նրա օտարերկրյա միավոր հանդիսացող մասնաճյուղի հաշվեկշիռների կոնսոլիդացիայի ընթացքում արտարժույթի փոխանակման արդյունքում առաջացած չիրացված շահույթը կամ վնասը:

**5405 «Սահմանված հատուցումների պլանների գծով ակտուարային օգուտներ և վնասներ»-** այս հաշիվը նախատեսված է սահմանված հատուցումների պլանների գծով փորձի վրա հիմնված ճշգրտումները (նախկին ակտուարային ենթադրությունների և փաստացի տեղի ունեցածների միջև տարբերությունների հետևանքները) և ակտուարային ենթադրություններում փոփոխությունների հետևանքները հաշվառելու համար: Հաշվառումը տարվում է ՀՀՄՍ 19-ի համաձայն:

**5406 «Այլ համապարփակ եկամուտ»-** այս հաշիվը նախատեսված է հաշվառելու համար այլ համապարփակ եկամուտները, որոնց համար սույն բաժնում նախատեսված հաշիվներ չկան:

**5407 «Ապահովագրության, համաապահովագրության, վերաապահովագրության պայմանագրերի ժամանակային արժեքի և**



**Ֆինանսական ռիսկի ճշգրտման գծով օգուտներ և վնասներ»** հաշիվը նախատեսված է ՖՀՄՍ 17-ով սահմանված հիմնական մոտեցման կիրառման դեպքում պայմանագրերի կատարման գծով դրամական հոսքերի ժամանակային արժեքի և ֆինանսական ռիսկի ճշգրտման հաշվառման համար:  
**(54.07-րդ ենթակետը լրաց. 27.12.22թ.թիվ 343-Ն)**

## **ԴԱՍ 6. ԵԿԱՄՈՒՏՆԵՐ**

### **ԲԱԺԻՆ 60**

#### **«Եկամուտներ ապահովագրական գործունեության գծով»**

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 600 «Եկամուտներ ուղղակի ապահովագրության գծով», 601 «Եկամուտներ համաապահովագրության գծով», 602 «Եկամուտներ պահվող վերաապահովագրության գծով», 603 «Եկամուտներ սուբրոգացիայի գծով առաջացած պահանջների գծով», 604 «Եկամուտներ ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերում պարունակվող ներդրումային բաղադրիչի գծով», 605 «Ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի, ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերում ներառված ածանցյալ գործիքների գծով եկամուտներ», 606 «Վերաապահովագրական ակտիվների ձևավորման գծով եկամուտներ», 607 «Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ», 608 «Ապահովագրության ծառայությունների գծով եկամուտներ, անբարենպաստ պայմանագրերի հակադարձումից եկամուտներ, ապահովագրության և վերաապահովագրության գծով ֆինանսական եկամուտներ», 609 «Այլ եկամուտներ ապահովագրական գործունեության գծով»:

#### **Ենթաբաժին 600**

#### **«Եկամուտներ ուղղակի ապահովագրության գծով»**

Այս ենթաբաժինը նախատեսված է ապահովագրողներից, համաապահովագրողներից վերաապահովագրողներից, ապահովագրական միջնորդներից ստացվելիք գումարների հաշվառման համար:  
Հաշիվը կրեդիտագրվում է եկամուտների ավելացման դեպքում և դեբետագրվում է դրանց նվազման, ֆինանսական արդյունքներին վերագրման դեպքում:

**6000 «Ուղղակի ապահովագրության պայմանագրերի գծով եկամուտներ»** - այս հաշիվը նախատեսված է վաստակած ապահովագրավճարների հաշվառման համար:

Վաստակած ապահովագրավճարների գումարով ձևակերպվում է.

Դտ-104 ենթաբաժնի համապատասխան հաշիվ/ 300 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ-6000

Հաշվետու ժամանակաշրջանի վերջում եկամուտները ֆինանսական արդյունքներին վերագրելիս.

Դտ-6000

Կտ-530 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

### **Ենթաբաժին 601 «Եկամուտներ համաապահովագրության գծով»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են համաապահովագրության գծով եկամուտների հաշվապահական հաշվառման համար:

Վաստակած ապահովագրավճարների գումարով ձևակերպվում է.

Դտ 105 ենթաբաժնի համապատասխան հաշիվ/ 301 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ 6010

Ֆինանսական արդյունքներին վերագրելիս ձևակերպվում է.

Դտ 6010

Կտ-530 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Ստացվելիք հատուցումների գումարով ձևակերպվում է.

Դտ 105 ենթաբաժնի համապատասխան հաշիվ/ 301 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ 6011

Ֆինանսական արդյունքներին վերագրելիս ձևակերպվում է.

Դտ 6011

Կտ-530 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

### **Ենթաբաժին 602 «Եկամուտներ վերաապահովագրության գծով»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են վերաապահովագրությամբ ընդունած ռիսկերի գծով եկամուտների, պահվող վերաապահովագրության

պայմանագրերի գծով ստացվելիք պարգևավճարների և հատուցումների գծով եկամուտների հաշվառման համար:

Ստացվելիք վերաապահովագրավճարների գումարով ձևակերպվում է.

Դտ- 106 ենթաբաժնի համապատասխան հաշիվ/302 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ- 6020

Եկամտի վերագրումը ֆինանսական արդյունքներին.

Դտ- 6020

Կտ- 530:

Ստացվելիք պարգևավճարների վաստակած գումարով ձևակերպվում է.

Դտ- 108 ենթաբաժնի համապատասխան հաշիվ/303 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ- 6021

Ֆինանսական արդյունքներին վերագրելիս ձևակերպվում է.

Դտ- 6021

Կտ- 530:

Ստացվելիք հատուցումների գումարով ձևակերպվում է.

Դտ 108 ենթաբաժնի համապատասխան հաշիվ/303 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ 6022

Ֆինանսական արդյունքներին վերագրելիս ձևակերպվում է.

Դտ 602

Կտ-530:

### **Ենթաբաժին 603**

#### **«Եկամուտներ սուբրոգացիայի գծով առաջացած պահանջների գծով»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են սուբրոգացիայի գծով առաջացած պահանջների գծով եկամուտների հաշվառման համար:

Սուբրոգացիայի գծով առաջացած պահանջների գումարով ձևակերպվում է.

Դտ-305 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ-6030

Եկամտի վերագրումը ֆինանսական արդյունքներին.

Դտ-6030

Կտ-530:

### **Ենթաբաժին 604**

#### **«Եկամուտներ ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերում պարունակվող ներդրումային բաղադրիչի գծով»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրում պարունակվող ներդրումային բաղադրիչի դրական վերագնահատումից եկամուտների հաշվառման համար:

Դրական վերագնահատման գումարով ձևակերպվում է.

Դտ-111 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ-604:

Եկամտի վերագրումը ֆինանսական արդյունքներին.

Դտ-604

Կտ-530:

### **Ենթաբաժին 605**

**«Ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի, Ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերում ներառված ածանցյալ գործիքների գծով եկամուտներ»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի, նրանցում ներառված ածանցյալ գործիքների դրական վերագնահատումից եկամուտների հաշվառման համար:

Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի, կամ նրանցում ներառված ածանցյալ գործիքների դրական վերագնահատման գումարով ձևակերպվում է.

Դտ-111 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ-605:

Եկամտի վերագրումը ֆինանսական արդյունքներին.

Դտ-605

Կտ-530:

### **Ենթաբաժին 606**

**«Վերաապահովագրական ակտիվների ձևավորման գծով եկամուտներ»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են վերաապահովագրական ակտիվների ձևավորման գծով եկամուտների հաշվառման համար:

Արտացոլման ենթակա եկամտի գումարի չափով ձևակերպվում է.

Դտ- 108 ենթաբաժնի համապատասխան հաշիվ,

Կտ- 606 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Եկամտի վերագրումը ֆինանսական արդյունքներին.

Դտ- 606 ենթաբաժնի համապատասխան հաշիվ,

Կտ- 530:

### **Ենթաբաժին 608**

#### **«Ապահովագրության ծառայությունների գծով եկամուտներ, անբարենպաստ պայմանագրերի հակադարձումից եկամուտներ, ապահովագրության և վերաապահովագրության գծով ֆինանսական եկամուտներ»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրության ծառայությունների գծով եկամուտները, անբարենպաստ պայմանագրերի հակադարձումից եկամուտները, ապահովագրության գծով ֆինանսական եկամուտները հաշվառելու համար:

Արտացոլման ենթակա գումարների չափով ձևակերպվում են

Դտ- 300-307/ 104-108 ենթաբաժինների համապատասխան հաշիվ,

Կտ- 608 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Եկամտի վերագրումը ֆինանսական արդյունքներին.

Դտ- 608 ենթաբաժնի համապատասխան հաշիվ,

Կտ- 530:

### **Ենթաբաժին 609**

#### **«Այլ եկամուտներ ապահովագրական գործունեության գծով»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ուղիղ հատուցումների վերջնահաշվարկի արդյունքում առաջացած եկամուտների, ինչպես նաև ապահովագրական գործունեության գծով այլ եկամուտների հաշվառման համար:

**6091 «Եկամուտներ ուղիղ հատուցումների վերջնահաշվարկի արդյունքում»** - այս հաշիվը նախատեսված է ուղիղ հատուցումների վերջնահաշվարկի արդյունքում եկամուտների հաշվարկման համար:

Վերջնահաշվարկի արդյունքների և ստացվելիք գումարների դրական տարբերության գումարով ձևակերպվում է.

Դտ-3060

Կտ-6091

Վճարվելիք գումարների և վերջնահաշվարկի արդյունքների դրական տարբերության գումարով ձևակերպվում է.

Դտ-3064

Կտ-6091:

Արտացոլման ենթակա եկամտի գումարի չափով ձևակերպվում է.

Դտ- համապատասխան պասիվային կարգավորող հաշիվ,

Կտ- 609 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Եկամտի վերագրումը ֆինանսական արդյունքներին.

Դտ-609 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ-530:

(60-րդ բաժինը խմբ. 27.12.22թ. թիվ 273-Ն)

## **ԲԱԺԻՆ 61-62**

### **«Ֆինանսական ակտիվների գծով եկամուտներ»**

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 610 «Եկամուտներ ներդրված ավանդների գծով», 611 «Եկամուտներ այլ ներդրումներից», 612 «Եկամուտներ բանկերին տրամադրված փոխառություններից և ռեպո համաձայնագրերից», 613 «Եկամուտներ ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններին տրամադրված փոխառություններից և ռեպո համաձայնագրերից», 614 «Եկամուտներ ներդրումային ընկերություններին տրամադրված փոխառություններից և ռեպո համաձայնագրերից», 615 «Եկամուտներ վարկային կազմակերպություններին տրամադրված փոխառություններից և ռեպո համաձայնագրերից», 616 «Եկամուտներ այլ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված փոխառություններից և ռեպո համաձայնագրերից», 617 «Եկամուտներ այլ անձանց տրամադրված փոխառություններից և ռեպո համաձայնագրերից», 618 «Եկամուտներ տույժերի և տուգանքների գծով» 619-620 «Եկամուտներ շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներից», 621 «Եկամուտներ իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ընթացիկ արժեթղթերից», 622 «Եկամուտներ իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ոչ ընթացիկ արժեթղթերից», 623 «Եկամուտներ ամորտիզացված արժեքով հաշվառվող ընթացիկ արժեթղթերից», 624 «Եկամուտներ ամորտիզացված արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ արժեթղթերից», 625 «Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից եկամուտներ», 626 «Դեբիտորական պարտքերի գծով եկամուտներ», 628 «Այլ ընթացիկ պահանջներից եկամուտներ այլ անձանց նկատմամբ», 629 «Այլ ոչ ընթացիկ պահանջներից եկամուտներ այլ անձանց նկատմամբ»:

### **Ենթաբաժին 610**

#### **«Եկամուտներ ներդրված ավանդների գծով»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերությունների կողմից բանկերում ներդրված ավանդների գծով ստացվելիք եկամուտների հաշվառման համար՝ հաշվարկված էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդով:

Այս ենթաբաժնի հաշիվները կրեդիտագրվում են եկամուտների ճանաչման ժամանակ՝ թղթակցելով համապատասխան ակտիվային հաշիվների հետ:

Այս բաժնի 611-624, 626 ենթաբաժինների հաշիվների հաշվառման սկզբունքները նույնն են, ինչ որ 610 ենթաբաժնի դեպքում է:

### **Ենթաբաժին 625**

#### **«Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից եկամուտներ»**

**6250 «Համատեղ վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ կամ վնաս»**–այս հաշվում հաշվառվում է համատեղ վերահսկվող միավորների կողմից ստացված շահույթներում կամ վնասներում ընկերության ունեցած բաժնեմասը: Հաշվառումը տարվում է համաձայն ՀՀՄՍ 31 ստանդարտի:

**6251 «Ասոցացված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ շահույթ կամ վնաս»**–այս հաշվում հաշվառվում է ասոցացված կազմակերպությունների կողմից ստացված շահույթներում կամ վնասներում ընկերության ունեցած բաժնեմասը: Տես 240 ենթաբաժնի մեկնաբանությունը:

**6252 «Դուստր ընկերություններում ներդրումներից զուտ շահույթ կամ վնաս»**–այս հաշվում հաշվառվում է դուստր ընկերությունների կողմից ստացված շահույթներում կամ վնասներում ընկերությունների ունեցած բաժնեմասը: Տես 240 ենթաբաժնի մեկնաբանությունը:

### **Ենթաբաժին 628**

#### **«Այլ ընթացիկ պահանջներից եկամուտներ այլ անձանց նկատմամբ»**

Այս ենթաբաժնի հաշիվներում հաշվառվում են շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվների, ինչպես նաև դուստր, ասոցացված ընկերությունների, համատեղ վերահսկվող միավորների նկատմամբ այլ ընթացիկ պահանջների գծով եկամուտները: Հաշիվները կրեդիտագրվում են պահանջների գծով եկամուտների ճանաչման ժամանակ՝ թղթակցելով 24 բաժնի հաշիվների հետ:

### **Ենթաբաժին 629**

#### **«Այլ ոչ ընթացիկ պահանջներից եկամուտներ այլ անձանց նկատմամբ»**

Այս ենթաբաժնի հաշիվներում հաշվառվում են դուստր, ասոցացված ընկերությունների, համատեղ վերահսկվող միավորների նկատմամբ այլ ոչ ընթացիկ

պահանջների գծով եկամուտները: Հաշիվները կրեդիտագրվում են պահանջների գծով եկամուտների ճանաչման ժամանակ՝ թղթակցելով 24 բաժնի հաշիվների հետ:

## **ԲԱԺԻՆ 63**

**«Կորուստների վերականգնումից (փոխհատուցումից) եկամուտներ»**

### **Ենթաբաժին 630-631**

**«Կորուստների վերականգնումից եկամուտներ»**

Այլ ենթաբաժնի հաշիվները նախատեսված են 6300-6310 հաշիվներում նշված ակտիվների գծով կորուստների վերականգնումը, ինչպես նաև հաշվեկշռից դուրս գրված լինելու դեպքում՝ այդ ակտիվների կամ դրանց մի մասի փոխհատուցումից ստացված միջոցները հաշվառելու համար:

## **ԲԱԺԻՆ 64**

**«Եկամուտներ ապահովագրական պարտավորությունների հակադարձումից»**

### **Ենթաբաժին 640**

**«Եկամուտներ ապահովագրական պարտավորությունների հակադարձումից»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական պարտավորությունների/տեխնիկական պահուստների հակադարձումից եկամուտների հաշվառման համար:

**6400 «Եկամուտներ չվաստակած ապահովագրավճարների պահուստի հակադարձումից»** - այս հաշվում հաշվառվում է չվաստակած ապահովագրավճարների պահուստի հակադարձման գումարը:

Մասնավորապես, չվաստակած ապահովագրավճարների պահուստը հակադարձելիս ձևակերպվում է.

Դտ-չվաստակած ապահովագրավճարների պահուստ

Կտ-6400:

6400 հաշվի մնացորդը եկամուտներին վերագրելիս ձևակերպվում է.

Դտ-6400

Կտ-530:

6401-6409 հաշիվների հաշվառման սկզբունքները նույնն են, ինչ որ 6400 հաշվինը:

**(64-րդ բաժինը խմբ. 27.12.22թ. թիվ 243-Ն)**



## **ԲԱԺԻՆ 68**

### **«Այլ եկամուտներ»**

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 680 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների արժեզրկման կորուստի հակադարձումից եկամուտներ», 681 «Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների օտարումից (վաճառքից) և պարտավորությունների մարումներից եկամուտներ», 682 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից եկամուտներ», 683 «Եկամուտներ այլ համապարփակ եկամտի հակադարձումից», 689 «Այլ եկամուտներ»:

#### **Ենթաբաժին 680**

##### **«Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների արժեզրկման կորուստի հակադարձումից եկամուտներ»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների գծով նախկինում ճանաչված արժեզրկման կորուստի հակադարձումից (վերագնահատման կամ վաճառքի արդյունքում) եկամուտների հաշվառման համար:

Ենթաբաժնում արտացոլվող վերագնահատումից և արժեզրկման կորուստի հակադարձումից եկամուտների հաշվառումը տարվում է համաձայն ՀՀՄՍ 16-ի, ՀՀՄՍ 36-ի, ՀՀՄՍ 38-ի:

#### **Ենթաբաժին 681**

##### **«Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների օտարումից (վաճառքից) և պարտավորությունների մարումներից եկամուտներ»**

Այս ենթաբաժինը նախատեսված է ապահովագրական ընկերության ընդհատվող գործունեությանը վերագրելի ակտիվների վաճառքից և պարտավորությունների մարումից ստացվող եկամուտների հաշվառման համար: Հաշվառումը տարվում է համաձայն ՀՀՄՍ 35 ստանդարտի:

#### **Ենթաբաժին 682**

##### **«Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից եկամուտներ»**

**6820 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից եկամուտներ»-** այս հաշվում հաշվառվում են ապահովագրական ընկերության կողմից արտարժույթով ակտիվների՝ ՀՀ կենտրոնական բանկի փոխարժեքով վերահաշվարկներից ստացված եկամուտները:

### **Ենթաբաժին 683**

#### **«Եկամուտներ այլ համապարփակ եկամտի հակադարձումից»**

Այս ենթաբաժինը նախատեսված է այլ համապարփակ եկամտում կուտակված դրական վերագնահատումից օգուտները որպես իրացված եկամուտ ճանաչման համար: Ենթաբաժնի հաշիվները կրեդիտագրվում են իրացված եկամտի չափով՝ դեբետագրելով այլ համապարփակ եկամտի համապատասխան հաշիվը:

### **Ենթաբաժին 689**

#### **«Այլ եկամուտներ»**

**6890 «Այլ եկամուտներ»-** այս հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերության կողմից ստացված այն եկամուտների հաշվառման համար, որոնց համար նախատեսված չեն առանձին հաշիվներ: Հաշվառման սկզբունքը նույնն է, ինչ որ մյուս եկամտային հաշիվների հաշվառման դեպքում:

## **ԲԱԺԻՆ 69**

### **«Նախորդ ժամանակաշրջանի եկամուտներ»**

### **Ենթաբաժին 690**

#### **«Նախորդ ժամանակաշրջանի եկամուտներ»**

Այս ենթաբաժինը նախատեսված է նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող գործառնությունների գծով հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերված էական սխալների ուղղումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքում առաջացած՝ նախորդ տարիների եկամուտների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար (եթե ընկերությունն ընտրել է այնպիսի քաղաքականություն, ըստ որի՝ էական սխալների ուղղումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքները ներառվում են հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքներում): Նախորդ ժամանակաշրջանների ֆինանսական արդյունքների ճշգրտման մոտեցումները նկարագրված են ՀՀՄՍ 8 «Հաշվետու

Ժամանակաշրջանի գուտ շահույթ կամ վնաս, էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ» ստանդարտում:

## ԴԱՍ 7. Ծախսեր

### ԲԱԺԻՆ 70

#### «Ապահովագրության հետ կապված ծախսեր»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 700 «Ուղղակի ապահովագրության գծով ծախսեր», 701 «Համաապահովագրության գծով վճարվելիք գումարների գծով ծախսեր», 702 «Վերաապահովագրությամբ ընդունած ռիսկերի գծով վճարվելիք գումարների գծով ծախսեր», 703 «Պահվող վերաապահովագրության պայմանագրերի գծով վճարվելիք և փոխանցվելիք գումարների գծով ծախսեր», 704 «Ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերի, նրանց բաղադրիչների գծով կորուստներ», 705 «Ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի, Ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերում ներառված ածանցյալ գործիքների գծով կորուստներ», 706 «Վերաապահովագրական ակտիվների նվազեցման գծով ծախսեր», 707 «Ապագա ժամանակաշրջանի ծախսեր», 708 «Ապահովագրության ծառայությունների գծով ծախսեր, անբարենպաստ պայմանագրերի գծով կորուստներ, Ապահովագրության և վերաապահովագրության գծով ֆինանսական ծախսեր», 709 «Վճարվելիք և փոխանցվելիք այլ գումարների գծով ծախսեր»:

#### Ենթաբաժին 700

#### «Ուղղակի ապահովագրության գծով ծախսեր»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովադիրներին վճարվելիք հատուցումների, հետ վերադարձվող ապահովագրավճարների, ապահովագրական միջնորդներին վճարվելիք գումարների և ապահովագրության հետ կապված վճարվելիք այլ գումարների ծախսերի հաշվառման հետ:

Վճարվելիք կամ փոխանցվելիք գումարի չափով ձևակերպվում է.

Դտ- 700

Կտ- 305

Ծախսերը ֆինանսական արդյունքներին վերագրելիս ձևակերպվում է.

Դտ-530

Կտ-700:

Այս բաժնի 701-703 ենթաբաժինների հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 700 ենթաբաժնի հաշիվների դեպքում է:

#### Ենթաբաժին 704

**«Ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերի, նրանց բաղադրիչների գծով կորուստներ»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերում պարունակվող ներդրումային բաղադրիչի բացասական վերագնահատումից կորուստների հաշվառման համար: Ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերում պարունակվող ներդրումային բաղադրիչի բացասական վերագնահատման գումարով ձևակերպվում է.

Դտ-704

Կտ-310:

Կորստի վերագրումը ֆինանսական արդյունքներին.

Դտ-530

Կտ-704:

Ապահովագրության պայմանագրերում պարունակվող ներդրումային բաղադրիչի, ածանցյալ գործիքի բացասական վերագնահատման գումարով ձևակերպվում է.

Դտ-704 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ-310 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Ծախսի վերագրումը ֆինանսական արդյունքներին.

Դտ-530 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ-704:

**Ենթաբաժին 705**

**«Ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի, Ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերում ներառված ածանցյալ գործիքների գծով կորուստներ»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են Ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի, նրանցում ներառված ածանցյալ գործիքների բացասական վերագնահատումից կորուստների հաշվառման համար:

Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի բացասական վերագնահատման գումարով ձևակերպվում է.

Դտ-705

Կտ-311:

Կորստի վերագրումը ֆինանսական արդյունքներին.

Դտ-530

Կտ-705:

Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերում պարունակվող ներդրումային բաղադրիչի, ածանցյալ գործիքի բացասական վերագնահատման գումարով ձևակերպվում է.

Դտ-705 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ-311 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Ծախսի վերագրումը ֆինանսական արդյունքներին.

Դտ-530 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ-705:

### **Ենթաբաժին 706**

#### **«Վերաապահովագրական ակտիվների նվազեցման գծով ծախսեր»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերության վերաապահովագրական ակտիվների նվազեցման գծով ծախսերի հաշվառման համար:

Նվազեցվող գումարի չափով ձևակերպվում է.

Դտ- 706 ենթաբաժնի համապատասխան հաշիվ,

Կտ- 108 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Ծախսի վերագրումը ֆինանսական արդյունքներին.

Դտ-530 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ-706:

### **Ենթաբաժին 708**

#### **«Ապահովագրության ծառայությունների գծով ծախսեր, անբարենպաստ պայմանագրերի գծով կորուստներ, Ապահովագրության և վերաապահովագրության գծով ֆինանսական ծախսեր»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրության ծառայությունների գծով ծախսերը, անբարենպաստ պայմանագրերի գծով կորուստները, ապահովագրության գծով ֆինանսական ծախսերը հաշվառելու համար:

Արտացոլման ենթական գումարների չափով ձևակերպվում են

Դտ- 708 ենթաբաժնի համապատասխան հաշիվ,

Կտ-300-305 ենթաբաժինների համապատասխան հաշիվ/104-108 ենթաբաժնի հաշիվ:

Եկամտի վերագրումը ֆինանսական արդյունքներին.

Դտ- 530,

Կտ-708 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

### **Ենթաբաժին 709**

### **«Վճարվելիք և փոխանցվելիք այլ գումարների գծով ծախսեր»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ուղիղ հատուցումների վերջնահաշվարկի արդյունքում առաջացած ծախսերի, ինչպես նաև ապահովագրական գործունեության գծով այլ ծախսերի հաշվառման համար:

**7091 «Ծախսեր ուղիղ հատուցումների վերջնահաշվարկի արդյունքում»** - այս հաշիվը նախատեսված է ուղիղ հատուցումների վերջնահաշվարկի արդյունքում ծախսերի հաշվարկման համար:

Վերջնահաշվարկի արդյունքների և ստացվելիք գումարների բացասական տարբերության գումարով ձևակերպվում է.

Դտ-7091

Կտ-3064

Վճարվելիք գումարների և վերջնահաշվարկի արդյունքների բացասական տարբերության գումարով ձևակերպվում է.

Դտ-7091

Կտ-3060:

**(Բաժին 70-ը խմբ. 27.12.22թ. թիվ 243-Ն)**

### **ԲԱԺԻՆ 71**

**«Ապահովագրական պարտավորությունների ձևավորման հետ կապված ծախսեր»**

#### **Ենթաբաժին 710**

**«Ապահովագրական պարտավորությունների ձևավորման հետ կապված ծախսեր»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական պարտավորությունների/տեխնիկական պահուստների ձևավորման հետ կապված ծախսերի հաշվառման համար: Հաշիվները դեբետագրվում են պատավորությունների ձևավորման ժամանակ, կրեդիտագրվում են ֆինանսական արդյունքներին վերագրելիս:

Ձևավորվող պարտավորության գումարով ձևակերպվում է.

Դտ- 710

Կտ-300-305 ենթաբաժինների համապատասխան հաշիվ:

Պարտավորության ձևավորման ծախսերը ֆինանսական արդյունքին վերագրելիս.

Դտ- 530

Կտ-710:

**(Բաժին 71-ը խմբ. 27.12.22թ. թիվ 243-Ն)**

### **ԲԱԺԻՆ 72-73**

## **«Ֆինանսական պարտավորությունների գծով ծախսեր»**

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 720 «Ծախսեր բանկերից ներգրավված վարկերի դիմաց», 721 «Ծախսեր ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններից ներգրավված փոխառությունների դիմաց», 722 «Ծախսեր ներդրումային ընկերություններից ներգրավված փոխառությունների դիմաց», 723 «Ծախսեր վարկային կազմակերպություններից ներգրավված վարկերի, փոխառությունների դիմաց», 724 «Ծախսեր այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված փոխառությունների, վարկերի դիմաց», 725 «Ծախսեր այլ անձանցից ներգրավված փոխառությունների դիմաց», 726 «Ծախսեր գանձապետարանից ստացված վարկերի դիմաց», 727 «Ծախսեր տույժերի և տուգանքների գծով», 728 «Ծախսեր ապահովագրական ընկերության կողմից թողարկված արժեթղթերի գծով», 729 «Կորուստներ շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով», 730 «Կորուստներ առևտրային նպատակներով պահվող պարտավորությունների գծով», 739 «Այլ ծախսեր»:

Այս բաժնի 720-726, 728 ենթաբաժինների հաշիվները նախատեսված են ֆինանսական պարտավորությունների գծով էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված ծախսերի հաշվառման համար, 727 ենթաբաժնում արտացոլվում են տույժերը և տուգանքները՝ հաշվեգրված գծային մեթոդով, 729, 730 ենթաբաժիններում արտացոլվում են նախատեսված են շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների, ածանցյալ գործիքների, ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթերի, ինչպես նաև առևտրային նպատակներով պահվող այլ պարտավորությունների իրական արժեքի գծով կորուստների մեծության արտացոլման համար: Հաշիվները դեբետագրվում են ծախսերի առաջացման ժամանակ, կրեդիտագրվում՝ դրանք ֆինանսական արդյունքներին վերագրելիս:

## **ԲԱԺԻՆ 74**

### **«Կառավարչական և հասարակական կապերի գծով ծախսեր»**

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 740 «Ծախսեր անձնակազմի գծով», 741 «Այլ կառավարչական ծախսեր», 742 «Հասարակական կապերի գծով ծախսեր», 743 «Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր», 744 «Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր», 749 «Այլ ծախսեր»:

### **Ենթաբաժին 740 «Ծախսեր անձնակազմի գծով»**



Այս ենթաբաժնում հաշվառվում են ընկերության անորոշ և որոշակի ժամկետով աշխատող աշխատակիցներին տրվող աշխատավարձի, պարգևատրումների և լրավճարների, արձակուրդների և ոչ աշխատանքային օրերի համար վճարումների, անձնակազմի ուսուցման և անձնակազմի սպասարկման այլ ծախսերը, ինչպես նաև սոցիալական ապահովագրության գծով հատկացումները: Այս ենթաբաժնի հաշիվները թղթակցում են դեբիտորական և կրեդիտորական պարտքերի համապատասխան հաշիվների հետ:

**Ենթաբաժին 741**  
**«Այլ կառավարչական ծախսեր»**

Այս ենթաբաժնում հաշվառվում են ընկերության կողմից շենքի և այլ հիմնական միջոցների վարձակալության, շենքի, սարքավորումների ու փոխադրամիջոցների տեխնիկական սպասարկման և պահպանման, անվտանգության ապահովման, աուդիտի և այլ փոխհատուցվող հարկերի ու տուրքերի, վարկերի տրամադրման և վերադարձման, գործուղումների, գրասենյակային, ապահովագրության, կազմակերպչական (այսինքն՝ ընկերության կողմից կատարված այն ծախսերը, որոնք կատարվել են ընկերության գրանցման և կազմակերպման ընթացքում) և այլ կառավարչական ծախսերը: Այս ենթաբաժնի հաշիվները թղթակցում են դեբիտորների և կրեդիտորների համապատասխան հաշիվների կամ դրամական միջոցների հաշիվների հետ:

**Ենթաբաժին 742**  
**«Հասարակական կապերի գծով ծախսեր»**

Այս ենթաբաժնում հաշվառվում են գովազդի, հասարակական կապերի գծով վճարների և ընկերության ներկայացուցչության հետ կապված ծախսերը: Ենթաբաժնի հաշիվները թղթակցում են ակտիվների և պարտավորությունների համապատասխան հաշիվների կամ դրամական միջոցների հաշիվների հետ:

**Ենթաբաժին 743**  
**«Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր»**

Այս ենթաբաժնում հաշվառվում են ընկերության հիմնական միջոցների մաշվածության ծախսերը, ինչպես նաև օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հիմնական միջոցներ) մաշվածության ծախսերը: Ենթաբաժնի հաշիվները դեբետագրվում են հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսերը հաշվեգրելիս՝

թղթակցելով 201 «Հիմնական միջոցների ամորտիզացիա» ենթաբաժնի համապատասխան հաշիվների հետ:

**Ենթաբաժին 744**  
**«Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր»**

Այս ենթաբաժնում հաշվառվում են ընկերության ոչ նյութական, ինչպես նաև օգտագործման իրավունքի ձեռով ակտիվների մաշվածության ծախսերը: Ենթաբաժնի հաշիվները դեբետագրվում են ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսերը հաշվեգրելիս՝ թղթակցելով 203 «Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա» ենթաբաժնի համապատասխան հաշիվների հետ:

**Ենթաբաժին 749**  
**«Այլ ծախսեր»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են արժեթղթերի թողարկման գծով ծախսերի, տուգանքների, տույժերի գծով ծախսերի և նաև այն ծախսերի հաշվառման համար, որոնց համար առանձին հաշիվներ նախատեսված չեն:

**ԲԱԺԻՆ 76**

**«Այլ ծախսեր»**

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 760 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների գծով կորուստներ», 761 «Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների օտարման (վաճառքի) և պարտավորությունների մարման ծախսեր», 762 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից ծախսեր», 763 «Կորուստներ այլ համապարփակ եկամտի հակադարձումից», 769 «Այլ ծախսեր»:

**Ենթաբաժին 760**

**«Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների գծով կորուստներ»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների արժեզրկումից և վաճառքից կորուստների հաշվառման համար, երբ վերջիններս չեն հակադարձում այլ համապարփակ եկամտում կուտակված օգուտը: Հաշվառումը տարվում է ՀՀՄՍ 16-ի, ՀՀՄՍ 38 և ՀՀՄՍ 36-ի համաձայն:

**Ենթաբաժին 761**

**«Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների օտարման (վաճառքի) և պարտավորությունների մարման ծախսեր»**

Այս ենթաբաժինը նախատեսված է ապահովագրական ընկերության ընդհատվող գործունեությանը վերագրելի ակտիվների վաճառքից և պարտավորությունների մարումից ծախսերի հաշվառման համար: Հաշվառումը տարվում է համաձայն ՀՀՄՍ 35 ստանդարտի:

**Ենթաբաժին 762**

**«Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից ծախսեր»**

**7620 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից ծախսեր»-** այս հաշվում հաշվառվում են ապահովագրական ընկերության կողմից արտարժույթով ակտիվների՝ ՀՀ կենտրոնական բանկի փոխարժեքով վերահաշվարկներից ստացված ծախսերը:

**Ենթաբաժին 763**

**«Կորուստներ այլ համապարփակ եկամտի հակադարձումից»**

Այս ենթաբաժինը նախատեսված է այլ համապարփակ եկամտում կուտակված բացասական վերագնահատումից կորուստները որպես իրացված եկամուտ ճանաչման համար: Ենթաբաժնի հաշիվները դեբետագրվում են իրացված կորուստի չափով՝ կրեդիտագրելով այլ համապարփակ եկամտի համապատասխան հաշիվը:

**ԲԱԺԻՆ 77**

**«Ակտիվների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) պահուստին հատկացումներ»**

**Ենթաբաժին 770-771**

**«Ակտիվների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) պահուստին հատկացումներ»**

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ավանդների, փոխառությունների, ամորտիզացված արժեքով հաշվառվող արժեթղթերի, այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների և նրանց նկատմամբ այլ պահանջների հնարավոր կորուստների գծով պահուստներին կատարվող հատկացումների հաշվառման համար:

Հնարավոր կորուստների գումարով ձևակերպվում է.

Դտ- 770-771

Կտ- հնարավոր կորուստների պահուստների հաշիվներ:

## **ԲԱԺԻՆ 78**

### **«Նախորդ ժամանակաշրջանի ծախսեր»**

#### **Ենթաբաժին 780**

#### **«Նախորդ ժամանակաշրջանի ծախսեր»**

Այս ենթաբաժինը նախատեսված է նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող գործառնությունների գծով հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերված էական սխալների ուղղումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքում առաջացած նախորդ տարիների ծախսերի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար (եթե ընկերությունն ընտրել է այնպիսի քաղաքականություն, ըստ որի՝ էական սխալների ուղղումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքները ներառվում են հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքներում): Նախորդ ժամանակաշրջանների ֆինանսական արդյունքների ճշգրտման մոտեցումները նկարագրված են ՀՀՄՍ 8 «Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ կամ վնաս, էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ» ստանդարտում:

## **ԲԱԺԻՆ 79**

### **«Շահութահարկի գծով ծախս»**

#### **Ենթաբաժին 791**

#### **«Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)»**

Այս ենթաբաժնում հաշվառվում են շահութահարկի գծով ընթացիկ և հետաձգված ծախսերը (փոխհատուցումները): Շահութահարկի հաշվառումը նկարագրված է ՀՀՄՍ 12 «Շահութահարկ» ստանդարտում:

## **ԴԱՍ 8. Արտահաշվեկշռային հաշիվներ**

### **Ենթաբաժին 800 «Որպես գրավ պահվող ակտիվներ»**

Այս ենթաբաժնում հաշվառվում են ընկերության կողմից որպես գրավ պահվող ակտիվները: Այս հաշիվներից դրանք դուրս են գրվում, երբ գրավով ապահովված պարտավորությունները մարվում են, կամ գրավը իրացվում է:

### **Ենթաբաժին 801 «Գրավադրված ակտիվներ»**

Այս ենթաբաժնում հաշվառվում են ընկերության այն ակտիվները, որոնք տրամադրվել են որպես գրավ (ընդ որում՝ այստեղ չեն արտացոլվում ռեպո համաձայնագրով վաճառված ֆինանսական ակտիվները): Այս հաշիվներում հաշվառվող գումարները դուրս են գրվում դրանցով ապահովված պարտավորությունների մարման կամ դրանց նկատմամբ սեփականության իրավունքի կորստի դեպքում:

### **Ենթաբաժին 802 «Կարճաժամկետ վարձակալություն կամ փոքրարժեք ակտիվների վարձակալություն»**

Այս ենթաբաժինը նախատեսված է կազմակերպության կողմից կարճաժամկետ վարձակալությամբ ստացված, ինչպես նաև վարձակալված փոքրարժեք ակտիվների հաշվառման համար, որոնք չեն հաշվառվում հաշվեկշռային հաշիվներում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ՝ համաձայն ՖՀՄՍ 16-ի: Սույն ենթաբաժնում ընդգրկվող միջոցները անհրաժեշտ է հաշվառել պայմանագրով սահմանված տվյալ տարվա վարձակալության գումարի չափով:

### **Ենթաբաժին 803 «Պայմանական ակտիվներ»**

Այս ենթաբաժնում հաշվառվում են փոխառությունների դիմաց ստացված երաշխավորությունները, երաշխիքները: Այստեղ հաշվառվող գումարները դուրս են գրվում երաշխավորությամբ, երաշխիքներով տրված փոխատվությունների մարման կամ երաշխավորությունների, երաշխիքների դիմաց վճարում ստանալիս:

**Ենթաբաժին 804**  
**«Պայմանական պարտավորություններ»**

Այս ենթաբաժնում հաշվառվում են տրամադրված երաշխավորությունների գումարները: Այստեղ հաշվառվող գումարները դուրս են գրվում այն դեպքում, երբ այն պարտավորությունները, որոնց համար տրված են այդ երաշխավորությունները, մարվել են, կամ երաշխավորությունների մարման դեպքում:

**Ենթաբաժին 805**  
**«Ապահովագրական գումարներ»**

Այս ենթաբաժնում հաշվառվում են կնքված ապահովագրական պայմանագրերով սահմանված ապահովագրական գումարները: Այս հաշիվներից գումարները դուրս են գրվում, ապահովագրական պայմանագրերի գործողության ժամկետի ավարտի, պայմանագրի վաղաժամկետ լուծման և այն բոլոր դեպքերում, երբ դադարում է ապահովագրական պայմանագրով նախատեսված պարտավորությունը:

**Ենթաբաժին 806**  
**«Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթեր»**

Այս ենթաբաժնում հաշվառվում են կնքված ռեպո համաձայնագրերով գնված արժեթղթերը՝ ըստ համապատասխան հաշիվների:

**Ենթաբաժին 807**  
**«Ածանցյալ գործիքներ»**

Այս ենթաբաժինը նախատեսված է ածանցյալ գործիքների պայմանագրային արժեքի հաշվառման համար: Արժույթային ածանցյալների դեպքում արտարժույթային միջոցների գրանցումը կատարվում է գործարքի կնքման օրը ՀՀ կենտրոնական բանկի սահմանած հաշվարկային փոխարժեքով:

**Ենթաբաժին 808**  
**«Ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքներ»**

Այս ենթաբաժնում հաշվառվում են ձեռք բերված ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերում գործիքների հիմքում ընկած ակտիվները:

**Ենթաբաժին 809**  
**«Այլ արտահաշվեկշռային հոդվածներ»**

Այս ենթաբաժնում արտացոլվում են այն հոդվածները, որոնց համար արտահաշվեկշռի առանձին հոդվածներ նախատեսված չեն:

**(Հավելված 2-ը փոխ. 31.03.17թ. թիվ 79-Ն, 11.10.19թ. թիվ 157-Ն, 27.12.22թ. թիվ 243-Ն որոշումներով)**